2024, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (648)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Փետրվարի 16-ին

ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Խրիստոս Սոֆիանոպուլոսին:

Նորին Սրբությունը, ողջունելով դեսպանին, մաղթեց արդյունավոր առաքելություն՝ ի նպաստ երկու բարեկամ երկրների հարաբերությունների առավել զորացման: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հայ-հունական բարեկամությունը գալիս է դարերի խորքից և խարսխված է քրիստոնեական արժեհամակարգի ամուր հիմքերի վրա:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաև երկու ժողովուրդների պատմական առնչակցություններին և կրած ծանր կորուստներին: Վեհափառ Հայրապետը նշեց, որ առկա մարտահրավերներին ու փորձություններին հնարավոր է դիմակայել միմյանց աջակից ու զորավիգ լինելով:

Հանդիպմանը Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Սփյուռքում հայ և հույն համայնքների սերտ գործակցությանը, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական և Հույն Ուղղափառ եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Հայաստանի և Արցախից բռնի տեղահանված հայորդիների առջև ծառացած հիմնախնդիրներին:

Իր հերթին դեսպան Խրիստոս Սոֆիանոպուլոսը Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ առավելագույն ջանքեր կներդնի հայ-հունական գործակցության առավել զորացման, ինչպես նաև Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

«Հայկական գրադարանային ասոցիացիայի» անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայկական գրադարանային ասոցիացիայի» (ՀԳԱ) անդամներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի հիրատարակչական բաժնի և «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանի:

Տեր հայրը, Նորին Սրբությանը ներկայացնելով հյուրերին, ընդգծեց, որ վերջիններս Մայր Աթոռ են ժամանել Գիրք նվիրելու օրվան ընդառաջ՝ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը: Տեր Արարատը նաև անդրադարձավ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի և ՀԳԱ-ի միջև առկա համագործակցությանը:

Հայոց Հովվապետը, իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ՀԳԱ-ի անդամներին, մաղթեց արդյունավոր առաքելություն՝ հայորդիների մեջ ընթերցասիրությունը զորացնելու և գրական ժառանգությանը հաղորդ դարձնելու առաքելության մեջ: Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց գրադարանների գործունեությունն ի նպաստ հայորդիների կրթության և հոգեկերտվածքի ձևավորման՝ հաստատելով նաև, որ գիրքը մարդու կյանքի լավագույն ուղեկիցն է: Այս առիթով Հայոց Հովվապետն արձանագրեց, որ Եկեղեցին մշտապես կանգնած է եղել գրականության ստեղծման, սերունդների կրթության և դաստիարակության ակունքներում:

Իր հերթին ՀԳԱ-ի նախագահ և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն տիկին Ռուզան Տոնոյանը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ընդունելության համար, տեղեկություններ փոխանցեց ՀԳԱ-ի հիմնադրման, գործունեության և առաջիկա ծրագրերի մասին:

Զրույցի ընթացքում քննարկվեցին գրադարանների առջև ծառացած մարտահրավերները, դրանց հաղթահարման, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ փոխգործակցության ընդլայնման հնարավոր ուղիները:

Փետրվարի 19-ին

Կարդինալ Կլաուդիո Գուջերոտիին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արևելյան Կաթոլիկ Եկեղեցիների քահանայապետական գրասենյակի նախագահ կարդինալ Կլաուդիո Գուջերոտիին, որը Հայաստան էր ժամանել Վեհափառ Հայրապետի հրավերով:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ վերհիշեց վերջինիս ծառայության տարիները Հայաստանում՝ իբրև պապական նվիրակ, և Մայր Աթոռի հանդեպ մշտապես դրսևորած նրա ջերմ վերաբերմունքը: Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց կարդինալ Գուջերոտիին հայագիտությանը բերած նրա ավանդի համար:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա եղբայրական գործակցությանը, ապա իր մտահոգությունները ներկայացրեց կարդինալ Գուջերոտիին տարածաշրջանում ստեղծված բարդ իրավիճակի և Հայաստանի առջև ծառացած անվտանգային մարտահրավերների վերաբերյալ:

Հանդիպմանը քննարկվեցին նաև Մերձավոր Արևելքում քրիստոնեական համայնքների կյանքին առնչվող խնդիրներ: Կարևորվեց Քրիստոնեական Եկեղեցիների ջանքերի մեկտեղումը՝ ի խնդիր մարդկության կյանքում խաղաղության ու համերաշխության հաստատման:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Ֆրանցիսկոս Պապին փոխանցեց իր եղբայրական բարեմաղթանքները:

Եկեղեցական իրադարձություններ

Գերագույն հոգևոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Փետրվարի 20–24-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ատենապետությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված կազմով ժողովը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքից հետո ժողովը վարելու հրավիրվեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Հայաստանի ու Արցախի շուրջ ընթացող զարգացումների, երկրի առջև ծառացած մարտահրավերների, արցախահայության իրավունքների պաշտպանության, նրանց ուղղված սոցիալական աջակցության և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ իրականացված նախաձեռնությունների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի սոցիալական ծառայության վարչական խորհրդի ատենապետ Տ. Գևորգ եպս. Սարոյանը, Մայր Աթոռի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, Իրավունքի և արդարության կենտրոնի «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն տիար Արման Թաթոյանը:

Քննարկման ընթացքում Գերագույն հոգևոր խորհուրդը դատապարտելի նկատեց հրադադարի պայմաններում Ադրբեջանի անթաքույց ծավալապաշտական նկրտումները, Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ շարունակվող ադրբեջանական զինված ուժերի ոտնձգությունները և թշնամանքի ու հայատյացության քարոզչությունը: Հայրենիքի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրների հաղթահարման, Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության հարցում Գերագույն հոգևոր խորհուրդը կենսական և կարևոր համարեց համազգային միաբանությունը, ազգային կառույցների ներուժի արդյունավետ կենտրոնացումը, Հայաստան և Սփյուռք հարաբերությունների առողջացումն ու գործակցության պատշաճ կազմակերպումը: Ժողովականները նաև աղոթք բարձրացրին օրեր առաջ Սյունիքի Ներքին Հանդ գյուղի հայկական դիրքերի ուղղությամբ ադրբեջանական ագրեսիայի պատճառով զոհված զինծառայողների հոգիների խաղաղության և վիրավորների շուտափույթ ապաքինման համար:

Անդրադարձ կատարվեց Ադրբեջանի որդեգրած՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության թիրախավորման ու յուրացման քաղաքականությանը, պատմամշակութային արժեքների, պատմական սրբատեղիների ու շիրիմների պղծման ու ոչնչացման դեպքերին: Գերագույն հոգևոր խորհուրդը կարևորեց Մայր Աթոռի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի հետևողական ջանքերը միջազգային հանրությանն իրազեկելու Արցախի հուշարձաններին սպառնացող վտանգների մասին:

Տեղեկացվեց նաև, որ իրականացվող սոցիալական ծրագրերի շրջանակներում անցած ամիսներին Եկեղեցին կեցության պայմաններով ապահովել և նյութական աջակցություն է տրամադրել բռնի տեղահանված բազում արցախահայերի, մասնավորաբար ուշադրության կենտրոնում են եղել զոհվածների և չորս ու ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները: Ընդգծվեց սոցիալական ծրագրերի շարունակականությունն ապահովելու համար նոր միջոցների ներգրավման անհրաժեշտությունը:

Եկեղեցի–պետություն հարաբերություններին և հանրակրթության ոլորտում իրականացվող փոփոխությունների մասին զեկույցներ ներկայացրին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը և ՔԴԿ-ի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Արձանագրվեց, որ Եկեղեցի–պետություն ոչ բնականոն հարաբերությունների պատճառով լուծման կարոտ են մնացել ազգային-հոգևոր նշանակության առանցքային մի շարք հիմնախնդիրներ՝ առնչված օրենսդրական, կրթական, մշակութային, սրբավայրերի պահպանության կարևորագույն ոլորտներին:

Ժողովականները մտահոգություն արտահայտեցին, որ հանրակրթության ոլորտում իշխանությունների որդեգրած քաղաքականության արդյունքում հարվածի տակ են հայտնվել հայագիտական առարկաները, մասնավորաբար կոպտագույն սխալներով, բացթողումներով և կամայական մոտեցումներով աղճատվել և ձևախեղվել է Հայոց պատմության բովանդակությունը: Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ ԳՀԽ-ն եզրահանգեց, որ օրինական բոլոր ճանապարհներով պետք է հանրակրթությունը զերծ պահել ինչպես հակագիտական, այնպես էլ հակազգային հոսանքների և գաղափարների ազդեցությունից:

Մասնավոր անդրադարձ կատարվեց նոր Սահմանադրություն ընդունելու վերաբերյալ ՀՀ իշխանությունների մտադրությանը: Ընդգծելով, որ ՀՀ Սահմանադրության հիմքն են կազմում ազգային-հոգևոր կյանքի խորհրդանիշերը, մեր ժողովրդի նվիրական անցյալի հիշատակներն ու իրադարձությունները և ազգային մեր իղձերն ու ձգտումները՝ ժողովականներն անթույլատրելի համարեցին այդ արժեքների որևէ նսեմացում կամ անտեսում հանրային քննարկումներում՝ առավել ևս նոր Սահմանադրության ընդունման համատեքստում:

Գերագույն հոգևոր խորհուրդը խիստ տարակուսելի համարեց նոր Սահմանադրություն ընդունելու նախաձեռնությունը հատկապես այն ժամանակ, երբ հանրային ստվար շրջանակներում դա ընկալվում է նաև որպես հետևանք արտաքին հարկադրանքի: Արձանագրվեց, որ նոր Սահմանադրության ընդունման վերաբերյալ Հայաստանի բարձրաստիճան տարբեր պաշտոնյաների, ինչպես նաև Ադրբեջանի նախագահի խոսույթը միայն խորացնում է առկա կասկածները:

Քննության առնելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները՝ ԳՀԽ-ն խիստ կարևորությամբ ընդգծեց, որ օրենքում առաջարկվող հավելումները չպետք է հակասեն մեր ժողովրդի՝ ընտանիքի նվիրական պատկերացումներին ու քրիստոնեական ընկալումներին և չպետք է տեղիք տան մերժելի տարընկալումների:

Մայր տաճարի հիմնանորոգության ընթացքի և վերաօծման, ինչպես նաև մյուռոնօրհնության արարողությունների կազմակերպական աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը և լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Ժողովականները նաև այցելեցին Մայր տաճար և ծանոթացան հիմնանորոգության ընթացքին: Ողջունելով կատարված աշխատանքները՝ ԳՀԽ-ի անդամներն արձանագրեցին, որ Մայր տաճարի հիմնանորոգության աշխատանքներն ավարտական փուլում են: Որոշվեց Մայր տաճարի վերաօծման և մյուռոնօրհնության արարողությունները կազմակերպել սույն թվականի սեպտեմբերի 28–29-ին՝ Ս. Գևորգ զորավարի և Վարագա Ս. Խաչի տոներին: ԳՀԽ-ն թելադրեց Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության և հարակից միջոցառումները համակարգող հանձնախմբին իրականացնել տաճարի վերաօծման ու մյուռոնօրհնության արարողությունների կազմակերպչական աշխատանքները:

Ժողովի ընթացքում ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2023 թվականի գործունեության տեղեկագիրը, ֆինանսական տարեկան հաշվետվությունը և վերստուգիչ հանձնախմբի զեկույցը: Ներկայացվեցին նախորդ տարում Հայաստանում և Սփյուռքի համայնքներում իրականացված հոգևոր-քարոզչական, մշակութային, կրթական և սոցիալական բնույթի ծրագրերը:

Քննարկման առարկա դարձան նաև Նվիրապետական Աթոռների, թեմերի գործունեությանը, եկեղեցավարչական, կանոնական, իրավական, կրթադաստիարակչական ոլորտներին առնչվող տարաբնույթ այլ հարցեր:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և Պահպանիչ աղոթքով:

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը ժամանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Փետրվարի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արք. Մաշալյանը:

Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին թափորով առաջնորդեցին Ս. Հովհաննես Մկրտիչ և Ս. Վարդան մատուռ-մկրտարան, ուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի հանդիսապետությամբ կատարվեց «Հրաշափառի» արարողություն:

Մուշեղ սրբազանը Մայր Աթոռի միաբանության անունից ողջունեց և բարի գալուստ մաղթեց Սահակ Պատրիարքին: Այնուհետև Պոլսո Հայոց Պատրիարքն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Սուրբ Էջմիածնի միաբանությանը՝ գոհություն վերառաքելով առ Աստված, որ Տիրոջ օրհնությամբ վերստին գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ամենապատիվ Սահակ Պատրիարքը նաև իր մասնակցությունը բերեց Մայր Աթոռում գումարված Գերագույն հոգևոր խորհրդի ժողովին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականների հետ

Փետրվարի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպեց հերթական՝ երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներին մասնակից քահանաներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, տեղեկություններ փոխանցեց վերապատրաստման դասընթացների ընթացքի վերաբերյալ:

Այնուհետև Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերելով հոգևոր հայրերին, կարևորեց վերապատրաստման այս դասընթացները, որոնք հնարավորություն են ընձեռում տարբեր թեմերից ժամանած հոգևորականներին համախմբվելու Մայր Աթոռում, իրենց ուխտը վերանորոգելու, հոգևոր փորձառությունը միմյանց փոխանցելու, ինչպես նաև քննարկելու եկեղեցու և հասարակության առջև ծառացած արդի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները:

Հայոց Հայրապետը հորդորեց եկեղեցականներին ամենայն ջանք ի գործ դնել ազգին, հայրենիքին ու եկեղեցուն այս ծանր ու դժվարին օրերին առավել ջանասիրաբար ծառայելու համար: Այս առնչությամբ Նորին Սրբությունը պատգամեց քահանա հայրերին հավուր պատշաճի արձագանքել ազգային կյանքում տեղ գտնող անցանկալի երևույթներին՝ նպաստելով առկա դժվարությունների հաղթահարմանը:

Անդրադառնալով սփյուռքի հայորդիների՝ հայրենիքին բերած աջակցությանը՝ Նորին Սրբությունն ի մասնավորի սփյուռքում ծառայող եկեղեցականներին հորդորեց իրենց համայնքների միջոցով տեղի իշխանությունների առջև բարձրաձայնել Հայաստանի և տեղահանված արցախահայության առջև ծառացած մարտահրավերները:

Հայոց Հովվապետը կարևոր նկատեց նաև հոգևորականների գործում մասնակցությունը հայորդիների կրթության և դաստիարակության գործում:

Հանդիպմանը վերապատրաստման դասընթացներին մասնակից հոգևորականների անունից Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց Արարատյան հայրապետական թեմի Երևանի Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նորայր ավ. քհն. Բաղդասարյանը: Տեր հայրն իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հովվապետին դասընթացների կազմակերպման համար՝ վստահեցնելով, որ դրանք իրենց օգտակարությունն են բերում քահանա հայրերի հովվական ծառայությանն առավել արդյունավորման գործում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն

Փետրվարի 22-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետական աստիճան ստանալու համար թեզ պաշտպանեց Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Հովակիմ աբղ. Սերովբյանը՝ «Թարգմանական կրոնական երկերը 18-րդ դարի պոլսահայ գրատպության մեջ» թեմայով:

Հանձնաժողովը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ արք. Գալստանյանը: Հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկված էին նաև Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանի՝ մասնավոր վարդապետության աստիճան տրվեց փետրվարի 22-ին վարդապետական թեզ պաշտպանած Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Հովակիմ աբղ. Սերովբյանին:

Նույն օրը Հայոց Հայրապետը Միքայել սրբազանի ուղեկցությամբ ընդունեց նորընծա Հովակիմ վարդապետին:

Վարդապետության աստիճանի տվչություն Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում

Փետրվարի 26-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ Հայ Եկեղեցու մասնավոր վարդապետության չորս աստիճանների տվչության արարողություն:

Ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանի՝ մասնավոր վարդապետության աստիճան տրվեց փետրվարի 22-ին վարդապետական թեզ պաշտպանած Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Հովակիմ աբղ. Սերովբյանին:

Նույն օրը Հայոց Հայրապետը Միքայել սրբազանի ուղեկցությամբ ընդունեց նորընծա Հովակիմ վարդապետին:

Հանդիպմանը ներկա էր նաև Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը և Մայր Աթոռի Սուբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու շնորհավորանքը բերելով հայր սուրբին, վստահություն հայտնեց, որ նորընծա վարդապետն առավել ջերմեռանդությամբ ու նախաձեռնությամբ կշարունակի իր նվիրյալ ծառայությունը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությանը՝ նպաստելով հայ համայնքի ազգային արժեքների և ինքնության պահպանմանը:

Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ նաև Սահակ Պատրիարքի՝ Կ. Պոլսի հայոց հոգևոր-եկեղեցական կյանքն աշխուժացնելու ուղղությամբ գործադրած ջանքերին և կարևոր ներդրմանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վարդապետական ականակուռ լանջախաչով զարդարեց Հովակիմ վարդապետի կուրծքը և Պահպանիչ աղոթքով օրհնեց նրան:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խրիմյան Հայրիկի մշտնջենականությունը

Հայոց հոգևոր և ազգային պատմության ուղենշային կերպարներից է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, որն իր հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործունեությամբ ժողովրդի կողմից արժանացավ Հայրիկ պատվանվանը՝ որպես հոգաբարձ ու պաշտպան ամենայն ազգի: Պատմաքաղաքական շատ բարդ ժամանակաշրջանում Խրիմյանն առաջնորդեց ժողովրդի ընթացքը և պատմություն կերտեց՝ զգալիորեն նպաստելով Հայաստանի ապագա անկախացմանը: Իմաստուն և շնորհառատ, կորովի և ըմբոստ, արդարադատ ու բարեգութ, գործունյա ու արթնամիտ, խանդավառ և սրախոհ. այսպես է հիշատակվում Խրիմյան Հայրիկը ժամանակի վավերագիր մատյաններում և ժամանակակիցների հիշողություններում. «Խրիմեան այս օրինական հոգևորականը մէն մինակ մի խորունկ խորհուրդ է,— գրում է Ավետիս Ահարոնյանը:— Անոր կեանքը, նիստ ու կացը, հագուելու եղանակը, նրա կերակուրները անգամ (հռչակաւոր թանի ապուրը) անսահման սէր եւ հետաքրքրութիւն կը ստեղծէր ժողովուրդին մօտ: Նրա ամէն մի խօսքը անքննադատելի եւ վսեմ պատգամ է»:

Համազգային սեր ու պատկառանք վաստակած Վեհափառն անցել է կյանքի ողբերգական ճանապարհ, բայց երբեք չի կորցրել հոգու լույսն ու մտքի պայծառությունը: Վաղ հասակից զրկվել է հորից, երիտասարդ տարիքում կորցրել մորը, կնոջն ու երեխային: Մշտապես աչքի առաջ էին իր ժողովրդի դժնդակ կյանքն ու իրավազուրկ վիճակը: Նրա բարոյական ու մտավոր հարստությունը կուտակվել է ոչ միայն ընթերցած գրքերից, այլև կյանքի դառը փորձառությունից:

Խրիմյանի իմաստասիրական-բարոյական ըմբռնումները նախևառաջ իր կրած տառապանքների ու զրկանքների դրսևորումներն են: Նրա պատգամների ու գործունեության վերարժևորումն այսօր առավել, քան երբևէ, անհրաժեշտություն է, հրամայական: Ֆիզիկական ու հոգևոր ներկայությամբ

«Այժմ իմ հայրապետական կոնդակով, տարաբախտ ազգիս վշտալի հայրապետս յորդորս եմ կարդում ձեզ, մեր բոլորի սիրելիներին, որ իսպառ թօթափեն սրտերից ատելութիւնը, մեծամտութիւնը եւ լինեն ընդմիշտ մի սիրտ եւ մի հոգի. համերաշխ եւ եղբայրական սիրով գործեն այնպիսի խոհեմութեամբ, իմաստութեամբ, որ իրենց գործունէութեան արգասիքները վնաս չբերեն մեր ազգին, այլ օգուտ ու զարգացում»:

Խրիմյանը պատկառազդու անհատականություն էր, որի խոսքն ու գործը մեծ արձագանք էին գտնում հայության շրջանում: Ժողովրդի կողմից Խրիմյանը հոգևորականի չափ ընկալվում էր նաև որպես բանաստեղծ: Իր գրական ստեղծագործություններում նա շարունակում էր հայրենյաց սիրո և ազգասիրության այն գաղափարները, որոնք իրականացնում էր հոգևորական գործունեությամբ (Խրիմյան Հայրիկի ժառանգությունն ի մի է բերվել 1929 թ. Նյու Յորքում հրատարակված հսկայածավալ գրքում՝ «Ամբողջական երկեր»-ում):

Այսպես՝ «Պապիկ և թոռնիկ» ստեղծագործության մեջ, որ համարվում է Մկրտիչ Խրիմյանի գլուխգործոցը, պապիկը թոռնիկին ժառանգում է հայոց հողի պաշտամունքը, ընտանեկան սրբությունների ու ազգային ավանդույթների սերը. «Իր գրականութեամբ ժողովուրդը մղեց սիրելու իր հողը զաւակի մըն նման եւ անկէ չհեռանալու,— նկատում է Վիգեն Թոսունյանը:— Տէր կանգնեցաւ իր հօտին իսկական հովիւի մը նման եւ զայն պաշտպանեց գայլերու վոհմակներէն: Քաջ քրիստոնեայ եկեղեցականի վայել կեցուածքով դէմ դրաւ մեր ժողովուրդը քնացած պահող Կոստանդնուպոլսոյ տգէտ հայ մեծահարուստներուն....»:

Խրիմյանը գտնում էր, որ *«Աշխարհի մեծագոյն մարգրիտը Աւետարանն է»*, և որ *«Առանց Աւետարանի առաջնորդութեան ուրիշ ուղիղ ճանապարհ չկայ»:* 1854-ին, երբ Պոլսո Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցու քարոզիչն էր, մի առիթով դիմելով եկեղեցու մեջ ներկա հայազգի գործիչներին և իր խոսքն անմիջականորեն ուղղելով սուլթանի վառոդապետին՝ Տատյան ամիրային, ասում է. *«Կը բաւէ արքունիքին վառօդ մատակարարես: Ամբարած վառօդներէդ քիչ մըն ալ Հայաստանի հայերուն տուր՝ թշնամիներու դէմ գործածելու համար»:* Ապա, դառնալով արքունի ճարտարապետին՝ Պալյան ամիրային, հորդորում է. *«Կը բաւէ սուլթանին համար պալատներ շինես, եկո՛ւր, քեզի Հայաստան տանիմ, հոն մեր նախնիներու աւերակներ շատ կան: Եկո՛ւր եւ նորոգէ՛ մեր փլած եւ կիսաւեր ամրոցները, բերդերն ու պալատները»:*

Այսօր, երբ որերորդ անգամ մեր ժողովրդի ու պետականության գլխին կախված են ցեղասպանության ու անկախության կորստի սպառնալիքները, հրատապ է առաջնորդվել Խրիմյան Հայրիկի հղած պատգամներով՝ մշտապես գիտակցելով նաև, որ ունայն են այն բոլոր հույսերը, որոնք կապվում են միջազգային հանրության ու գերտերությունների հետ: Ճշմարիտ ուղին մեկն է. հայն իր հույսը պետք է դնի միմիայն իր վրա՝ անընդհատ զինվելով ու կառչելով իր հողին. *«Ահա թողում ձեզ մշտախոս կտակ, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի, զի հողն պետք է: Կենաց և մահու օր պինդ գրկե հողն»:* Այնուհետև՝ *«Յոյսերդ յԱստուած եւ ի քեզ ժողովէ, վիատեալ ժողովուրդ, եւ գո՛նէ գիտցիր այսուհետև թէ՝ դու ինքդ ես միայն քեզ օգնական»*: Նույնն է հորդորում Հայրիկը նաև արտերկրի հայերին ուղղված կոչում. *«Սիրելի և օրհնված հայեր, երբ վերադառնաք հայրենիք, որպես նվեր ձեր ընկերներին ու բարեկամներին մեկական հատ հրացան տարեք: Ժողովուրդ, ամեն բանից առաջ ձեր ազատության հույսը ձեզ վրա դրեք, ձեր մտքի և ձեր բազկի ուժի վրա: Մարդը պիտի ճգնի իրեն փրկելու համար»:*

Բեռլինի վեհաժողովում համոզվելով, որ մեծ տերությունները երկդիմի քաղաքականություն են վարում, և Հայաստանի ու հայերի հարցը նրանց բոլորովին չի հուզում, Խրիմյանը ցավով նկատում է, որ անտեղի, իզուր էին հայության հույսն ու հավատը, թե եվրոպական քաղաքակիրթ տերությունները թույլ չեն տա ոտնահարելու արդարությունը: Ի վերջո, քաղաքակրթությունն ու մարդասիրությունն ավելի դիմակ են՝ քողարկելու դիվանագետների հոգեկան ամլությունը: Ուրիշ ժողովուրդներ Եվրոպայում ապուրը երկաթե շերեփով էին ճաշակում, այնինչ Հայաստանի շերեփը թղթից էր. *«Պեռլինում բոլոր հպատակ ազգերի համար բաժանում էր հոգեճաշ հարիսա, դուք ինձ ուղարկել էիք, որպէսզի ես գնամ եւ բերեմ մեր բաժինը: Բոլորը եկան իրենց երկաթէ շերեփներով, վերցրին ու տարան իրենց բաժինը, երբ ես փորձեցի վերցնել մեր բաժինը, իմ շերեփը թղթից էր ու լղճուեց մնաց հարիսայի մէջ, ես մնացի ձեռնունայն»*,— ասում է Հայոց Կաթողիկոսն ու հորդորում հայությանը՝ դեն նետել դարերով արմատացած կրավորականությունն ու դառնալ սեփական ճակատագրի տերը, պատրաստվել ազգային-ազատագրական պայքարի: ➥ էջ 7, 8

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գոյութենապաշտությունը Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ — 155

Ընկերամշակութային փոխակերպումների վայրիվերումներում, կյանքի գրեթե բոլոր ոլորտներում ակնհայտ է գոյութենական լարվածությունը: Ուշագրավ է, որ այդ լարվածությունը նախագծվում և արտացոլվում է ոչ միայն մամուլի էջերում ու հրապարակումներում, այլև ֆիլմարվեստում և գեղարվեստական գրականության մեջ: Եվ, մեծ հաշվով, արվեստագետները, գրողներն ու հրապարակախոսները կարող են ինչպես նպաստել, այնպես էլ թուլացնել գոյութենական լարվածությունը:

Սույն հոդվածի մեջ մենք փորձել ենք ուսումնասիրել կյանքի ընկալման համապատկերը Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում՝ հաշվի առնելով տվյալ դարաշրջանի և՛ պատմաքաղաքական ու հասարակական ծանր կացությունը, և՛ բանաստեղծի անձնական կյանքը, ներկայացնելով Թումանյանի՝ որպես հայոց անհուն տառապանքը կրող և իր ստեղծագործություններով բյուրեղացնող մեծագույն գրողի գոյութենապաշտությունը: Արցախի կորստի և Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերների համապատկերին զուգահեռվում են Թումանյանի ապրած ժամանակաշրջանի ազգային ողբերգության նույնական դրսևորումները. տարբերությունն ընկալման և ներկայացման մեջ է: Ապրելով իր հայրենիքի համար պատմական ծանր ժամանակաշրջանում, բեկելով իր մեջ ոչ միայն անձնական, այլև համամարդկային ու համազգային անվերջանալի տառապանքներն ու ողբերգությունները, այնուհանդերձ, բանաստեղծն իր մեջ պահպանել է գոյութենապաշտությունն ու ներդաշնակության և բարեշրջության երազանքը, կյանքը վերարժևորող համամարդկային վսեմ գաղափարները, հանուն բարձրագույն արժեքների զոհաբերվելու պատրաստակամությունը:

Կատարելության ու իրականության սուր հակադրությունը բանաստեղծի գոյութենական ընկալումների և կատարելատիպի միջև խզում չի առաջացրել, նա այդպես էլ չի դարձել իրերի ու հանգամանքների ենթական, ավելին՝ իշխանություն է հաստատել դրանց վրա՝ հռչակելով բարոյական իր տեսույթը.

Հեյ ագահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքդ երկար,
կյանքդ կարճ,
Քանի՞ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ինչ են տարել ընդրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

Հայդեգերյան այս գոյութենապաշտությունն արտացոլվել է ոչ միայն ուշ, այլև վաղ շրջանի գործերում, անձնական, հանրային և ազգային կյանքի ծանրագույն շրջաններում: Եթե Գրիգոր Նարեկացու դեպքում տեսնում ենք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», ապա Թումանյանի պարագայում դա ներքին հաղորդակցություն է տիեզերքի, հավերժության, անհունի հետ: Իրական աշխարհն ու անդրաշխարհը, մարմնի ժամանակավոր կյանքը և մարդկային հոգու անմահությունը համաքայլ են:

Խոհափիլիսոփայությունը կյանքի ու մահվան, մարդու բնույթի և ճակատագրի, մարդու և բնության միասնության շուրջ ներհատուկ է Թումանյանի գրեթե ամբողջ ստեղծագործությանը: Ապրումակցման, ներհայեցումի, խոր նույնացումների և ինքնանույնացումների արտացոլմամբ շոշափում ենք գրողի ներքին ամբողջության համակարգը. «Ա՜խ, ես երանի // Կայծակ լինէի, // Որոտ-ճայթյունով // Մըռայլ ամպերից // Ժայթքեի ըմբոստ, // Զարկեի ուժգին, // Պատռեի խավար // Կամարը երկնի, // Ցույց տայի մարդուն // Գաղտնիքը վերին, // Որ տեսներ՝ այնտեղ // Ի՞նչ բան կա ահեղ, // Կամ ո՞վ է նըստած, // Եվ ո՞ւր է աստված...»: Անմահության խորհրդին ենք հաղորդակցվում «Դեպի անհունը» ստեղծագործությամբ.

Փա՜ռք անպատում մըխիթարչին,
Փա՜ռք խորհուրդին անմահության.
Նա է կըրում հույսը վերջին
Ու շոգն անշեջ, արարչական.
Փա՜ռք խորհուրդին անմահության....
Վիշտը հանգչում է նըրա մեջ,
Ապրում սերը անապական.
Փա՜ռք խորհուրդին անմահության...

Բովանդակային առնչություններ ունեն «Դեպի անհունը» և «Խորհրդավոր մեռելը», «Ընկերիս», «Ժամանակն անվերջ», «Երնեկ թիթեռ ես լինեի», «Ցոլուն աստղեր ջինջ եթերում», «Դու գնում ես անդարձ ճամփա», «Տիեզերքի ընթերցումը», «Սիրիուսի հրաժեշտը» ստեղծագործությունները, որոնցում ևս գոյութենական դատողությունները մնում են կենսունակ՝ բանաստեղծի համար ամենածանր պայմաններում անգամ չառաջացնելով սահմանաբաժան վերացական ու առարկայական իրականության միջև:

Հավերժը, անհունը կամ աստվածայինը, կապված լինելով բանաստեղծի ներաշխարհի հետ, դառնում են նրա անհատականացված գիտելիքը, համազմունքն ու աշխարհայացքը: «Անհայտը», «Վերը», «Բարձրը», «Անհունը» ներդաշնակ, երջանիկ կյանքի թումանյանական իդեալի խորհրդանշական համակարգն են: Եվ ոչ մի ողբերգական դիպաշար, ոչ մի պատում այդպես էլ ի զորու չեղավ խաթարելու նրա ներքին վիպական խաղաղությունը: «Անուշ» պոեմում անգամ անմուրազ մեռած սիրահարներն իրենց երջանկությունը գտնում են երկնքում, և երկինքն իմաստավորվում է սիրով: Բանաստեղծը հաճախակի է նայում երկնքին, ինքնանույնանում և արժևորում նրա հետ շփումը. «Սքանչելի է երկինքը, իսկ ով է նայում դեպի երկինքը»,— ասում է բանաստեղծը: Երկինքն իմաստավորվում է որպես բարձրագույնի, վեհի ու կատարյալի մարմնավորում, արտապատկեր ու վերագրում, որպես միջնորդավորված կապի օղակ իր և Աստծու միջև: Հերոսն իր երջանկությունը պատկերացնում է Անհունի մեջ:

Աստվածայինը, հավերժականը, տիեզերականը հազար ու մի անուն ունեն Թումանյանի աշխարհում՝ Անճառ մին, Անվախճան, Աստված (ոչ միայն որպես դավանաբանական էակ, այլև տիեզերական կատարելություն, հավերժական խորհուրդ): Մարդկային կյանքի անկայունությանն ու անհաստատությանը, բնականաբար, նաև անցողիկությանը հակադրվում է հավերժականը. «Եվ ի՞նչ է մարդը, և ի՞նչ իրեն կյանք,— // Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ: // Հավերժականը չունի կերպարանք, // Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...»: Գոյութենական հիասթափության վիճակից դուրս գալու ելքը Թումանյանը կրկին հավերժական ու բացարձակ աշխարհի՝ Աստծու հետ մարդու կապի հաստատման մեջ է տեսնում: Աստծու հետ կապը, երկինքը, տիեզերքը սեփական գոյութենապաշտության բացահայտումն են.

Որ հայացք ես ինձ տըվել վերամբարձ՝
Սուզվելու վերին սահմաններն արփի,
Որ միտք ես տըվել երկնաճեմ ու բաց՝
Չափելու ահեղ բացերն անչափի,
Որ կապել ես մեզ, հոգիս քեզ արել՝
Հոգուս անհունի հըրճվանքը տալով,
Բարձըր ճակատիս ժըպիտ ես վառել,
Վառել, զարդարել արփենի փայլով,
Անթարթափ աչքով, անխարխափ հոգով
Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,
Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,
Ու գիշերները ահավոր ու պերճ:
Վերանում է վեր հոգիս զըվարթուն—
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անտարբեր աստված:

Այս բանաստեղծության մեջ հայդեգերյան ազատությունն է, որի մեջ մեծ է պատասխանատվության բեռը: Հայդեգերի համոզմամբ՝ ազատ լինել նշանակում է չգործել և չմտածել այնպես, ինչպես գործում և մտածում են ուրիշները, նշանակում է որոնել և գտնել ինքդ քեզ, և եթե մարդն ամբողջությամբ տնօրինում է իր գոյությունը, ուրեմն պարտավոր է պատասխան տալ իր բոլոր գործողությունների համար: Միաժամանակ նա պատասխանատու է ոչ միայն իր, այլև բոլորի համար: Բոլորի համար պատասխանատու լինելը մարմնավորվել է Թումանյանի տարբեր ստեղծագործություններում: Ահավասիկ կոթողային այս քառյակը, ուր նաև արտացոլված են Հայոց ցեղասպանության տառապանքի միջով անցած բանաստեղծի գոյութենապաշտական հիասթափությունն ու ընկճվածությունը, որ արդիական են նաև այսօր.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Այս քառյակն ընկալվում և ծածկազերծվում է որպես և՛ ազգային ողբերգության, և՛ աշխարհի մեռնող քաղաքակրթության փոխանցում: Ինչպես տիեզերական ներդաշնակության, այնպես էլ ընդհանուր համերաշխության իրական կարգազանցը անձնապաստան ու անձնիշխան մարդն է, որը չի հաղթահարում իր ճղճիմությունը և հազիվ հասնում է մարդասպանի մակարդակին: Եվ բանաստեղծը գոյութենապաշտական հիասթափության հաղթահարումը փնտրում է «հեռու մի անկյան» մեջ.

Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Գեղարվեստական գիտակցման զարգացման բոլոր փուլերում էլ համընդգրկուն և ընդարձակ են Թումանյանի մտքի, հոգու և ճանաչողության սահմանները: Նա հաղորդակցվեց համաշխարհային գրականությանն ու փիլիսոփայությանը, հոգեբանությանն ու արվեստին, բայց մնաց եզակի իր աշխարհընկալմամբ, արժեհամակարգով ու մտակարգով՝ նույնիսկ ցավի և տառապանքի մեջ արտացոլելով գոյութենապաշտություն. «Ծանրանում են մեր աշխարհքի ամեն ցավերը, գուցե այդ արդեն ապացույց է, որ ես էլ եմ բանաստեղծ, բայց, ասում եմ, զարմանալու բան է, ես առանց երգելու հոգնած եմ այդ ցավերից ու սիրում եմ բոլորովին ուրիշ ցավեր, ավելի անուշ, ավելի աստվածային, երջանիկ ցավեր: Չգիտեմ այսպես է, թե՞ ինձ այսպես է թվում. թե կարող ես ջոկիր.— այս ի՞նչ կենտրոնախույս տրամադրություն էր, որ իմ մուսային դարձնում է դավաճան՝ ազգի առջև»,— գրել է բանաստեղծը: Սիրել ցավը, այն համարել անուշ ու աստվածային կարող էր միայն բարձրագույն արժեքներին և Արարչին մերձեցողը, արարչական սկիզբը, ընթացքն ու ավարտն իմաստավարողը: Բնության տարբեր տեսարանների ու պատկերների հետ Թումանյանի ամուր խոհազգացմունքային կապը ևս փաստում է բնության ազնվության հետ նրա խորքային ինքնանույնացումների մասին: Նա բնության պես ազնիվ է, մաքուր և բյուրեղյա, և բնությունը՝ որպես հավերժի ստորոգություն, դառնում է գոյութենապաշտություն: Բազմաթիվ են բնությանն ու տիեզերքին մերձենալու՝ բանաստեղծի ստեղծագործությունները, որոնք ևս ամբողջացնում են կյանքի գոյութենապաշտական ընկալումը, ինչպես.

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Ջա՛ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Հանդերձյալ կյանքին, հոգու անմահությանը, ճամփորդ հոգուն առնչվող շեշտադրումները ևս սահմանում են բանաստեղծի կյանքի գոյութենապաշտական ըմբռնման ուղղվածությունը. «Երկու շիրիմ իրար կից, // Հավերժական լուռ դըրկից, // Թախծում են պաղ ու խորհում, // Թե՝ ի՞նչ տարան աշխարհքից»: Իսկ ճամփորդ հոգին ներըմբռնողական և ենթագիտակցական մղումներով տիեզերքում հարթում է իր ճանապարհը՝ այդ կերպ հաղթահարելով մահվան ողջ սարսափն ու ճնշումը.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին,
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Այսպես՝ հավերժը, տիեզերքը, երկինքը համընդգրկուն մտքի խիզախումներով դառնում են ինքնատիպ դրոշմ Թումանյանի ստեղծագործություններին՝ ոչ միայն ընդգծելով արարչագործության խորհուրդը, այլև բանաստեղծի կերպարը դարձնելով բացառիկ ու անընդունելի:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
հ. գ. թ., դոցենտ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Աստվածորոնում

Սկիզբը՝ նախորդ համարում

Նարեկացին խորացնում է մարդու մեղսական անուղղելիությունը: Խոստովանությունը և ներումը դեռևս սահման չեն, որովհետև մարդն իր սխալի մեջ անուղղելի է. «Բայց ինձ ի՞նչ օգուտ՝ հյուսել այս խղճուկ խոսքերը մորմոք, չափաբերական, // Երբ որ անցել է չափն իմ մեղքերի և անհնար է բուժումը նրանց» (Ե, դ): Նարեկացին անընդհատ ինքնախարազանման նույն խոսքերն է ասում. «Իսկ իմ մեղքերն ու հանցանքները այնքան շատ են, որ հիշել չի լինի» (Զ, գ): Այս ամենով հանդերձ՝ իր փրկության հույսը նա չի կտրում. այդ հույսն է, որ մեղքերից ազատագրվելու ակնկալիքով՝ նրան մղում է անընդհատ դատապարտելու իրեն: Իր մեղքն իրենն է, բայց իր մաքրագործման տարերքով նա իրեն «նեղողներից» ոմանց ուժ է տալիս, որոնք կենդանանում և իրենց հերթին կորստյան են մատնում նրա հոգին:

Նարեկացին թվարկում է մարդկային մեղավոր հոգու հատկանիշները. «Որդիս գեհենի և ո՛չ արքայության»՝ իրեն ամեն ինչով համարելով անարժանի մեկը. «Պաշտոնյաս տիրադրուժ է և երախտամոռ»: Ինքնախարազանման առաջին հարվածն ավարտվում է իններորդ գլխում, երբ նա անում է իր մեղքերի չափուկշիռը, այսինքն՝ ինքնագիտակցման է բերում իր արարքների ամբողջությունը.



Զի եթէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ յեղյեղեցից,
եւ զդաշտս ասպարիսաւք բազմաւք սահմանեալ՝
Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,
եւ զպուրակս յոգունց անտառաց շամբից եղեգանց
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
եւ ոչ զթիւ մի ի բարդելոցն անաւրէնութեանց
Զաւրեցից ընդ գրով սահմանի գրաւել,
Նա զի թէ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց զաւդեցից,
եւ կամ զլեառն Արարատեան
Ի կետ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ո՛չ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել (Թ, ա):

Այսպես՝ իր «մտածումների հույզերը թաքուն» իբրև արդեն կատարված չարիք խոստովանելով՝ Նարեկացին հանգում է հաջորդ իմաստությանը, ըստ որի՝ «Թե՛ զղջումն ուժգին և թե՛ մոլեգին մեղանչումը մեզ // Կորստյան են մատնում հավասարապես» (Ժ, ա): Այս զգացողությունը կարծես թե պետք է հավասարակշռության բերի նրան: Բայց հավասարակշռությունը նա պահպանում է ոչ թե մեղքի ու զղջումի տարերքն ավելի մերձեցնելով նժարի կենտրոնին, այլ ավելի հեռացնելով իրարից ու էլ ավելի ծավալելով, և դա այն աստիճանի, որ փոթորկահույզ տարերքն անհնարին է դառնում ոչ միայն զսպել, այլև կառավարել գիտակցությամբ:

Նարեկացին խորանում է մինչև մարդկային հոգու անդունդը, տեսնում է մարդու անկումը մինչև վերջ, ուր ոչ թե մարդն է Աստծու տված կերպարով, այլ բազմաթիվ արատների մեջ փոխված մարդը: Ի վերջո՝ մարդ-չարիքը, մարդ-չարքը, մարդ-սատանան: Մարդ-սատանան, որ ունակ է ամեն ինչի՝ ստախոսությունից մինչև իր նմանին ոչնչացնելու կործանարար կիրքը: Մարդ-սատանան՝ չարը, չարիքը, բոլոր այն երկրածին մեղքերի կրողը, ինչը նրան կարող է դարձնել միմիայն դժոխքի բաժին: Ահա այս անդունդից նա հայացք է ուղղում դեպի վեր, ուր ամբողջական մարդն է, Աստծու նմանողությամբ ստեղծված մարդու լիարժեք կերպարը: Նարեկացին ձգտում է վերականգնել այդ կերպարը, *վերագտնել ամբողջական ու լիարժեք մարդուն*: Իսկ այդ մարդը, քանի որ ստեղծված է Աստծու նմանողությամբ, ուստի մարդուց նրա հայացքն ուղղվում է Աստծուն՝ բացառիկ կատարյալին, միակին, որը և չափ է ու չափանիշ:

Նարեկացին ասես յուրովի մարմնավորում է *մահվան և հարության առասպելը*: Մարդը մեռնում է իր մեղքերի ծանրությունից և հարություն է առնում՝ ապաշխարելով իր շեղումների համար: Ապաշխարումը փրկություն է, խոստովանությունը մաքրագործման միջոց է, որովհետև քո առջև ոչ թե հոգևոր քննիչ է, դատախազ կամ դատավոր, այլ Ինքը՝ Գերագույնը, Բացառիկը, Ամենագութը, մեկ բառով՝ Աստված:

Նարեկացու *խոսքը ծովի ալիքների պես է*, որ մոտենում է ափին ու փշրվում որպես մեղքերի խոստովանություն, բայց որը վերջ չունի, ալիքները հաջորդում են իրար, ավելի հախուռն՝ հոգու փոթորկման պահին և ավելի խաղաղ՝ հերթական հզոր տարերքից հետո: Ծովը, որ Վանա լիճն է, տարբեր ձևերով առկա է «Մատյան....»-ում: Եղանակը փոխում է, բայց պատկերի հիմքը նույնն է. «Կյանքը ինձ համար նման է սաստիկ ծփացող ծովի, // Ուր հոգիս մարմնիս շինվածքով՝ իբրև նավակում, // Իրար վրա խուժող անթիվ, անհամար ալիքներից // Տարուբերվում է միշտ այս աշխարհում» (Իե, բ): Այսպես նա իրեն ամեն պահի տեսնում է «հոգևոր խորտակման» մեջ: Ամբողջ այս գլուխը ծովի, փոթորիկի, նավի խորտակման տեսարանն է պատկերագրում: Այնքան նուրբ մանրամասներով է Նարեկացին ներկայացնում խորտակվող նավի թիակները, կայմը, առագաստը, դիտարանը, առասանները, պարանները, սամիները, խարիսխը, ղեկը, լաստի ողնափայտը, նավագոգը, հետնակողմը, տախտակաշարը, բազմոցներն ու գահավորակը, ողբացող նավապետին, որը «Ձեռքը ծնոտին դրած՝ արցունքի գետ է հոսեցնում», որ թվում է, թե ինքը և՛ նավը կառուցողն է, և՛ նավաստին, և՛ նավապետը:

Ամեն ինչ խորապես անձնավորված է: Որքան էլ Նարեկացին՝ որպես մարդ անհատ, լինի մարդկության խորհրդանիշ, այնուամենայնիվ այնքան ներանձնական ինքնակործան անմիջականությամբ է ամեն ինչ ներկայացնում, որ ասես ոչ թե ինքն է մարդկության խորհրդանիշը, այլ հակառակը՝ մարդկությունն է իր խորհրդանիշը: Սա արդյունք է ծայրահեղ կենտրոնացման, ինչը և աղոթքի գերագույն վիճակն է: Այնպիսի կենտրոնացում, որ երբեք չկասկածես, թե Աստված չի լսում քեզ: Դա բարձրագույն հավատն է, որի միջոցով Նարեկացին փորձում է երկրային մեղքերի մեջ կորած մարդուց նոր մարդ ստեղծել: Ահա այս պահերին է, որ մարդուն (մարդկությանը) նա ասես նայում է երկնքից, նայում է տիրոջ հայացքով:

Շարժման երկու ուղղություն կա. մեկը՝ երկրից երկինք, որ ինքը՝ Նարեկացին է փորձում հաղթահարել և մերձենալ Աստծուն, և երկնքից երկիր, որ Սուրբ Հոգին իջնի և բնակվի իր մեջ: Երկրորդի կապակցությամբ գրում է. «Ո՜վ ամենապարգև ձեռք Հիսուս Քրիստոսի, // Դարձի՛ր դեպի ինձ, քո շնորհատու աջը կարկառելով, // Բնակվի՛ր իմ մեջ և միացի՛ր ինձ....» (ԼԲ, դ):

Փրկության հույսերի մեջ հարակայորեն խորանում է ողբերգության ցավը. ուրախության նվագների փոխարեն ողբին լծակից խոսքն է. «Ուր կան հառաչներ, հեծության ձայներ, ցասկոտ բողոքներ, // Խորտակիչ նախատինքներ, սաստիկ լաց ու կոծ» (ԼԳ, բ): Նարեկացին ամբողջովին ձգտում է «ծածուկ խորհուրդների բարձրաձայն խոստովանության», որպեսզի «խոսքի հաղորդությամբ» արժանի լինի երկնային ամենակարող Տիրոջը: Այդ անկեղծությունն էլ, ինքնաոչնչացմամբ այդ ինքնահաստատումը («Ես, որ իմ ձեռքով իսկ ջնջեցի ինձ») նրան ուժ ու վստահություն են տալիս դրանով «սպառազինված» մտնելու ասպարեզ (ԼԴ, ը):

Նարեկացին *խոսում է իր անունից, բայց համայն մարդկության ձայնով*, սակայն առանց մարդկությանը մեղադրելու, այլ միայն իրեն՝ որպես բոլորի մեղքերի կրողի և պատասխանատուի. «Արդ, ես ճշգրիտ պատկերս ամենայն մարդկանց, // Խառնելով մեղքերս նրանց մեղքերին, // Եվ նրանցով դառնությունն իմ կրկնակի ավելացնելով՝ // Հեծեծեմ պիտի նրանց հետ դարձյալ....» (Ծ, գ): Այնուհետև. «Հոգուս թևերով շրջեցի մարդկանց անթիվ անհամար սերունդների մեջ // Եվ ինքս իմ մեջ կշռադատելով չգտա ոչ ոք ինձ չափ մեղավոր. <...> // Ուստի գտնում եմ ես իրավացի համարել միայն մեղավոր ինքս ինձ, // Քան թե իմ խոսքով շատերին դատապարտել» (ԾԵ, ա): Նարեկացին հույս ունի, որ իր դեմ մեղանչողներին ներելու համար գուցե Տերն էլ իրեն ներում շնորհի:

Նարեկացին թվարկում է սրբերի ու երանելիների անուններ և ասում, որ ինքը ո՛չ Հոբն է, որ իրեն արդար ու անարատ համարի, ո՛չ Մովսեսն է, որն ասում էր. «Տերը պիտի ճանաչի նրանց, ովքեր Իրենն են», ո՛չ Դավիթն է, որ վստահ իր մաքրությանը՝ խոսք է ուղղում Տիրոջը. «Եթե սրտիս մեջ անօրինություն տեսնեի, Տերն ինձ չէր լսի», ո՛չ Եղիային է նման, որն իրեն Աստծու այր է կոչում, ո՛չ Երեմիան է՝ «Ճշմարտությունդ կորինակեի», ո՛չ Եզեկիան է՝ «Քո աչքի առաջ ես արդարությամբ քայլեցի», ո՛չ էլ Պողոսն է, որն իրեն համարեց Աստծու խոսքի բնակավայր, այլ ինքը «անօրեն» Նարեկացին է, որ իր այդ «անօրինությամբ» դառնում է նույն այդ ընտրյալներին դասակից:

Մեղավորի ու անմեղի այս հավերժական պայքարի հիմքում ընկած է *կյանքի և մահվան հիմնահարցը*. ի՞նչ է մարդու կյանքը, և ինչպիսի՞ն պիտի լինի այն: «Ծաղրվում եմ միշտ ու չեմ խրատվում» (ԿԲ, ա),— ասում է բանաստեղծը՝ ի ցույց դնելով կյանքի մարդակործան ծաղրը, խաղքը, խայտառակությունը, որի մեջ նա պիտի ապրելու ճանապարհը ճշտի՝ ճանապարհին ընկած ուղիղ խոսքի սերմը չտրորելով (Կ, դ):

Նարեկացին կյանքում *պարտվածների, կորածների հետ է*, որովհետև նախևառաջ նրանց հոգիները պիտի փրկել: Նա ոչ թե անիծում է շեղվածներին, այլ ճանապարհ է ցույց տալիս՝ աստվածային ներում հայցելով բոլորի համար: Նարեկացին *մեծ ներումի պատգամախոսն է*, քանի որ արդարներին ու անարդարներին բաժանող սահմանը մարդը չի գծել, այլ կյանքը՝ իր օրինակներով: Մարդու փրկությունը դառնում է գերնպատակ, ուստի առանց երկմտելու՝ հայտարարում է. «Ողբացեք վրաս այս խոսքի համար. // Թե «Ինչպես եղեգնը կվառվի կրակների մեջ, // Այնպես էլ մեղավորները այրվեն պիտի բոցերում բորբոջ»: Լացեք սաղմոսի այս խոսքի համար. «Կրակի կայծեր պիտի թափես դու նրանց վրա»» (ԿԲ, բ): Եվ այսքանից հետո՝ «Կյանքի օծումը պարգևիր ինձ՝ քեզ աղաչողիս» (ԿԲ, գ),— այնուհետև նույն ուղղությամբ խոսքը շարունակում է՝ դու «Ինձ երբեք կորչելու տեղիք չես տալիս» (ԿԳ, ա):

Այս ամենի նախասկիզբը մաքրագործվող հոգին է: Նորից ու վերստին Նարեկացին իր ասածն է պնդում և իր պնդածը հաստատում. «Ամոթալի արարքներս նշավակեցի, // Գաղտնիքներս հրապարակեցի, // Ծածուկներս հայտնեցի, // Թաքցրածներն ի ցույց հանեցի....» (ԿԵ, ա):

Անխուսափելի վախճանի առջև կանգնած՝ նա ինքն իրեն կենդանի չի համարում, ապաև շարունակում. «....ոչ էլ կորած եմ կարծում ես ինձ», քանի որ, ըստ նրա, կա «նորոգման հրաշքը», որին հավատում է (ԿԵ, գ): Որքան մեծ է փրկության հույսը, նույնքան էլ «սահմանափակ է մարդկանց փրկության կարողությունը» (Հ, գ): «Ո՞ւր փնտրեմ փրկությունս ես....» (ՀԱ, գ),— աղաղակում է Նարեկացին, քանի որ *անհաղթահարելի է թվում մարդու երկդիմի բնույթը*. «Հրեշտակ եմ դառնում երեսանց ու խորհուրդների մեջ դիվանում....» (ՀԱ, բ): Այս մտակառույցն իշխում է ամբողջ գրքում, և ըստ Նարեկացու՝ մարդը ներքուստ չի միավորվում, չի ամբողջանում սուրբ էությամբ, սատանան մարդու մեջ միշտ իր սև գործն է անում: Ու նորից այդ սև թույնը Նարեկացին իրենով է ներկայացնում. «Չկա ոչ ոք մեղավոր ինձ պես, ոչ ոք՝ անօրեն, // Ոչ ոք ամբարիշտ, ոչ ոք անիրավ, ոչ ոք չարագործ, <...> // Ոչ ոք դատապարտված, ես եմ այդ բոլորը, և բոլորի հանցանքներն իմ մեջ են» (ՀԲ, բ): Եվ իրենով էլ մաքրագործում է. «Հանի՛ր խայտառակությանս նախատինքներն ամոթալի, <...> // Հանգիստ պարգևիր մեղքերի բեռով սաստիկ հոգնածիս» (ՀԲ, գ): Այդպես նա փորձում է իր վրայից հանել դատապարտության կնիքը և փրկել հոգին:

Նարեկացին Աստծու աստվածային զորության հետ մեկտեղ ցույց է տալիս նաև Նրա մարդկային էությունը: «Զվարճախառն երկյուղով» նա գրում է հերթական ողբաձայն նվագը չարչարանքների մասին, որ բոլորի Աստվածն իր փոխարեն կրել է. «Կանգնեցիր իմ կերպարանքով ստեղծածիդ ատյանի առաջ....» (ՀԷ, ա): Կերտում է Հիսուս Քրիստոսի կերպարը խաչելության դիմաց. «Եվ խառնիճաղանջ ամբոխի առջև գանահարելով նրան սաստկապես՝ // Խիստ անարգանքի դատապարտեցին, // Ծնրադրեցին՝ ծաղրելու և պսակ դրին՝ հեգնելու համար» (ՀԷ, բ):

Մանրամասնորեն նկարագրելով Տիրոջ կրած տառապանքները՝ Նարեկացին վերադառնում է իր խոսքի սկիզբին. «Թող իզուր չանցնեն ինձ համար մարդացած Աստծուդ փրկարար չարչարանքները» (ՀԸ, բ): Նա, ով միմիայն իր մեղքերից էր խոսում, հիմա ողորմություն է հայցում. «Ողորմիր հզոր, կրկի՛ն ողորմիր: <...> // Մի՛ գրիր ծանր մահացու մեղքերս կյանքի դպրության քո մատյանի մեջ, <...> // Մի՛ արձանագրիր մեղկություններս, <...> // Եթե ամբարես չար գործերս անթիվ, կմեռնեմ ողջ-ողջ» (ՀԸ, գ): Տանջանքների սաստկության թեթևացում է աղերսում՝ գիտակցելով իր մեղքերի չափն ու «կենարար զղջման» անհրաժեշտությունը:

Այնուհետև նա նույն ձևով դիմում է Սուրբ Աստվածածնին՝ խնդրելով օգնություն. «Որ երբ դուրս ելնեմ այս երկրի հովտից, առանց տանջալից չարչարանքների գնամ դեպի կյանք....» (Զ, բ): Այնուհետև դիմում է հրեշտակներին, որոնք իր համար «գոչում են անլուռ // Հանապազօրյա բարեխոսությամբ» (ՁԱ, ա):

Խոսքը շարունակում է Բարձրյալին ուղղված նույն ողբաձայն հառաչներով և խնդրում. «Ցասստկացնես ինձ խայթողներին, այլ ուղղի՛ր նրանց» և ապա. «Կանգնեցրո՛ւ դու ինձ, որ բազմավտանգ հիվանդությունից մահվան ափն եմ հասել» (ՁԳ, բ):

Նարեկացին իր խոսքն ավարտում է այնպես, ինչպես սկսել էր. նույն ուղերձը Տիրոջը. «Աստված իմ և թագավոր իմ, կյանք իմ և ապավեն իմ, // Հույս իմ և վստահություն իմ, // Տե՛ր Հիսուս Քրիստոս, // Աստված բոլորի, // Սուրբերի սրտում հանգչող սո՛ւրբ դու....» (ՂԴ, ա) և նույն պաղատանքը «խոստովանյալ կյանքին». «Եղկելուս բազմավրեպ և սխալներով լի այս շարադրանքի // Պակասները դո՛ւ լրացրու խոսքով քո ամենազոր // Եվ այն մատուցիր որպես հաճելի աղերս բարձրյալ Հորդ» (ՂԵ, ա): Քրիստոսը նրա համար դառնում է իր ցավերի ու տանջանքների կենդանի խորհրդանիշ. «Դու ինձ համար անեծքների փորձության ենթարկվեցիր՝ // Կերպարանքովդ նմանվելով ինձ....» (ՂԵ, ա):

Նարեկացին իր այս կերպարով նմանվում է Քրիստոսին, իսկ իր այս «Մատյան....»-ով գրում է հայոց Ավետարանը, Ավետարան՝ ըստ Նարեկացու, կամ պարզապես՝ Նարեկ…

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բ. գ. դ., պրոֆեսոր

Գանձասարի վանքը

Գանձասար անունն առաջացել է նույն այն լեռնաբազկի անունից, որի վրա գտնվում է: Վանական համալիրը տեղակայված է Խաչենագետի հովտում՝ Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղից արևմուտք: Վանքի եկեղեցին կառուցվել է 1216–1238 թթ. ընթացքում, իսկ նավակատիքը (հանդիսավոր օծումը)՝ 1240 թ.: Ավելի ուշ՝ 1261–1266 թթ., Հասան-Ջալալ Դոլա իշխանը, իշխանուհի Մամքանը և նրանց որդի Աթաբակն ավարտին են հասցրել գավթի կառուցման աշխատանքները: Ժամանակակից պատմիչները հիացմունքով են պատմում եկեղեցու կառուցման և նրա օծման արարողության մասին: XIII դ. պատմագիր Կ. Գանձակեցին հաղորդում է, որ Խաչենի իշխան Հասան-Ջալալը «Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով գմբեթարդ երկնանման տաճար ի փառացն Աստուծոյ...., որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ, ի տեղի շիրմի իւրեանց և յոլով ամս աշխատ եղեն ի նմա»: Վանքի կառուցմանն ականատես պատմիչի «....ի տեղի շիրիմի իւրեանց» արտահայտությունը հաստատում է, որ հուշարձանը չի կառուցվել դատարկ տեղում, այլ մի վայրում, որտեղ շատ ավելի վաղ եկեղեցի է եղել: Այդ մասին է վկայում մասնավորապես Անանիա Մոկացի կաթողիկոսի (946–968 թթ.) «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» աշխատության մեջ տեղ գտած հաղորդումը, համաձայն որի՝ 949 թ. լուսավորչական-քաղկեդոնական վեճերը հարթելու համար ինքը՝ Անանիա կաթողիկոսը, նշանավոր իշխանների և հոգևորականների մասնակցությամբ Խաչենի Արդախ վայրում հրավիրում է ժողով, որին ի թիվս այլոց մասնակցում էր նաև «Հայր Սարգիս Գանձասարոյ վանականը»: Վերջինիս մասին հիշատակում է նաև պատմագիր Ստ. Օրբելյանը: Բացի այդ՝ վանքի բակում գտնվող մի շարք ավելի վաղ կերտված ու թվակիր արձանագրություններ պարունակող խաչքարերը, որ կանգնեցրել են Հասան Մեծը և Վախթանգ-Տանգիկը, նույնպես հաստատում են ներկայիս վանքի տեղում նախկինում գոյություն ունեցած հոգևոր կառույցի առկայության մասին:

Այսպիսով՝ ըստ էության՝ նախկին եկեղեցին չի ունեցել ճարտարապետական այնպիսի արժանիքներ, որոնք արտահայտեին Խաչենի իշխանության փառքն ու հզորությունը, և դա հավանաբար նկատի ունենալով՝ Հասան-Ջալալն ու նրա մերձավորները որոշեցին կառուցել նոր, ավելի վեհաշուք այդ տաճարը:

Հայ ճարտարապետության պատմության երախտավոր Ա. Յակոբսոնի կարծիքով՝ Գանձասարի վանքը ոչ միայն «ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է, մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»: Իսկ Սորբոնի համալսարանի երբեմնի նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարել է Գանձասարի վանքը՝ Աղթամարի և Հռիփսիմեի տաճարներից հետո՝ չորրորդ և հինգերորդ տեղերը հատկացնելով Հաղբատի վանքին ու Անիի մայր տաճարին:

Ըստ Մխիթար Գոշի՝ Գանձասար վանքը XII–XIII դդ. եղել է եպիսկոպոսանիստ և Խաչենի իշխանների տոհմական դամբարանը: XI–XII դդ. այստեղ հայտնի են եղել Սարգիս և Վարդան եպիսկոպոսները: Հետագա դարերում վանքի առաջնորդներն են եղել Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթեոս վարդապետը, Հովհաննես, Եղիա, Ներսես վարդապետները, Ղուկաս Լոռեցին, Ստեփանոս վարդապետ Շիրակունին և ուրիշներ: XIV դարում վանքը դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը, որին ժառանգաբար տիրել են Հասան-Ջալալյանները: Այս տոհմի իշխանների հովանավորությամբ էլ հռչակավոր վանքը երկար դարեր եղել է ոչ միայն հոգևոր, այլև մշակութային հզոր կենտրոն: Սակայն Գանձասարի վանքը միայն ճարտարապետական, մշակութային անգերազանցելի ստեղծագործություն չէր, այլև ժամանակի պատմական անցքերի, քաղաքական ու դիվանագիտական խիզախ ձեռնարկումների վկան: Մասնավորապես, սկսած XVII դ. վերջերից, Արցախ աշխարհի այս նշանավոր վանքը դարձել է երկրամասի ազգային-ազատագրական պայքարի կարևոր կենտրոններից մեկը, ընդ որում՝ կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն այդ պայքարի կամ շարժման կազմակերպիչն ու ղեկավարն էր, որի համագործակցությամբ Իսրայել Օրին առաջին քայլերն արեց Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու ուղղությամբ: Մինչ այդ՝ Պետրոս Խանձկեցու գահակալության տարիներին (1653–1675 թթ.), այստեղ է գրվել Ռուսաստանի կայսր Ալեքսեյ Միխայլովիչին ուղղված առաջին նամակը, որով արցախցիները Ռուսաստանի աջակցությունն են հայցել Արևելքի բարբարոսներից ազատագրվելու համար: Վանքի խաղացած դերը ինչպես Հայոց արևելից կողմանց, այնպես էլ ամբողջ հայոց քաղաքական ու մշակութային կյանքում շարունակվել է մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Այս շրջանից սկսած՝ վանքն աստիճանաբար զրկվել է իր հոգևոր բարձր ազդեցությունից, քանի որ 1815 թ. ցարական կառավարությունը վերացրել է Գանձասարի կաթողիկոսությունը՝ փոխարենը նրան արտոնելով մետրոպոլիտական իրավունք: Ավելի վատթար հարվածը եղավ այն, որ հետագայում էլ մետրոպոլիտությունը տեղափոխվեց Շուշի:

Գանձասարի վանքը բաղկացած է եկեղեցուց, գավթից և շրջակա այլևայլ շինություններից: *Եկեղեցին* կառուցված է սրբատաշ տորոնագույն քարից: Կրում է Սբ. Հովհաննես Մկրտիչ անվանումը (չափերը՝ 12,3 ×17,7 մ): Այն ունի ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն գմբեթակիր հորինվածք, որի չորս անկյուններն զբաղեցնում են կրկնահարկ ավանդատները: Ընդ որում՝ դեպի վերին ավանդատներ են տանում կոնսուլ աստիճանները, որոնց ստորին հատվածներում քանդակված են խոշոր ստալակտիտներ: Կառույցի կենտրոնում վեր սլացող գմբեթատակ տարածության անկյուններն ընդգծված են ուղղահայաց կիսանկյունների խրձերով, որոնք շրջանակում են տաճարի կենտրոնական մասը: Գմբեթատակ առագաստների մեջ տեղակայված են փորագրված զույգ խաչ, աստղ, շրջանակ, քառանկյուն և այլ զարդաքանդակներ՝ լրացված նուրբ ու ու վարպետորեն փորագրված պարուրաձև ու արմավազարդ հյուսկեն կերտվածքներով: Դրանք ոչ միայն չեն կրկնվում, այլև ավելի են ընդգծում գեղանախշ սյուներն ու առագաստները: Յուրաքանչյուր առագաստից վերև՝ գոտու տակ, տեղադրված են բարձրադիր պատկերաքանդակներ: Արևմտակողմ առագաստի վերնամասում տեղակայված քանդակը խոյի գլուխ է, արևելակողմ առագաստների վրա՝ եզների գլուխներ, իսկ հյուսիսարևմտյան առագաստի քանդակը նման է մարդկային դեմքի: Ըստ Ա. Յակոբսոնի՝ «...այս տիպի քանդակները.... հանդես էին գալիս որպես սուրբ կենդանիներ՝ ծառայելով ինչպես շենքի հենարաններ, և իմաստավորվում էին որպես կառույցի պահապաններ»:

Գմբեթի թմբուկը ներքուստ կլոր է՝ մշակված ութ զույգ կիսասյունով: Հարուստ են հատկապես բեմի ճակատային պատի զարդանախշերը: Դրանք բոլոր կողմերից երիզված են լայն ու խոր ելուստավոր գոտիներով: Շրջանակի մեջ առկա է ութ շեղանկյունի, որոնք կենտրոնում լուսաստվեր ստեղծելու համար թեթևակի խորացված են եռանկյունիներով:

Եկեղեցու արտաքին ծավալները հստակորեն կրկնում են շենքի ներքին հորինվածքը: Խաչաթևերն առանձնանում են բարձր ճակտոններով, իսկ անկյունային հատվածներն ավելի ցածրադիր են: Ճակատները մշակված են ոչ խոր եռանկյունի որմնախորշերով: Շենքը բարձրանում է հնգաստիճան պատվանդանի վրա:

Եկեղեցու ամեն մի պատ յուրովի է լուծված: Տաճարի հյուսիսային և հարավային ճակատները բաժանված են հնգական տափակ կամարներով, որոնց մանրամասները՝ հատկապես գեղազարդերը, խստորեն համապատասխանում են ճարտարապետական կառուցվածքին: Հարավային և հյուսիսային կամարները գեղանախշ կիսասյուներով շրջանակում են որմնախորշերը: Կենտրոնական մեծ կամարի վրա խոյանում է մեծադիր խաչը: Հարավային պատի այդ նույն կամարի տակ առկա է նեղ ու երկար լուսամուտ՝ եզերված նրբահյուս նախշերով, լուսամուտից վերև՝ բախտի անիվ խորհրդանշող զարդաքանդակը: Հյուսիսային պատը եզերված է այլ քանդակներով, իսկ խաչից վերև հավերժության խորհրդանշանն է:

Արևելյան ճակատը նույնպես բաժանված է նույնատիպ, սակայն կիսաշրջանաձև կամարներով: Կենտրոնական կամարը քիչ բարձրադիր է և ունի նեղ լուսամուտ: Արևմտյան կողմում կառուցված գավիթը ծածկել է խաչելության քանդակի հորինվածքը: Այն բաղկացած է լայնաթև խաչից և Քրիստոսի խաչված պատկերից:

Եկեղեցուն հմայք է տալիս գմբեթի բազմանիստ թմբուկը, որի վրայի չկրկնվող բարձրաքանդակներն ու վարդյականախշերը, կիսասյուների փնջերն ու հովհարաձև ծածկը գմբեթին տալիս են արտակարգ գրավիչ տեսք:

Տաճարի անհայտ ճարտարապետը եզակի թմբուկ է կերտել: Այն բաժանված է 16 նիստի, որոնց բարձրությունն ընդգծված է նաև զարդաքանդակների միջոցով: Նիստերից յուրաքանչյուրը քանդակագործության առանձին գլուխգործոց է: Նրանք շքեղ են՝ մեկը մյուսին գերազանցող նախշերով ու քանդակներով: Յուրաքանչյուր նիստի կողմերը շեշտված են բարձրադիր կիսասյուներով, որոնք ավարտվում են քանդակազարդ խոյակներով: Նիստերից ութի վրա մեկընդմեջ կան եռանկյունի խորշեր, որոնց խորքում քանդակով պսակված կիսասյուներ են: Մյուս նիստերը հարթ են, նրանցից չորսը զբաղեցնում են նեղ լուսամուտները, լայն շրջակալներով՝ ծածկված բարդ ու շատ նուրբ փորագրությամբ, իսկ շրջակալի վերևում կա վարդյակ: Մյուս չորս նիստերն ունեն փոքր, կլոր լուսամուտներ՝ նույնպես լայն ու խոր բնույթի շրջանակով: Դրանք բոլորն էլ պատված են ժանեկանման փորագրություններով: Նիստերից մեկը զուրկ է լուսամուտից, որին փոխարինում է ժանեկահյուս վարդյակի զարդաքանդակը:

Թմբուկի արևմտյան նիստերում տիրական են երկու կտիտորների քանդակները, որոնց դիմապատկերները միմյանց նման են: Նրանք վեր բարձրացրած ձեռքերով բռնել են եկեղեցու մանրակերտը՝ տախտակի վրա: Հետազոտողների կարծիքով՝ դրանք տաճարի կառուցման պատվիրատուներ Հասան-Ջալալ Դոլայի և նրա որդի Աթաբեկի բարձրաքանդակներն են: Մեկ այլ նիստի ճակտոնապատի տակ Քրիստոսի բարձրաքանդակն է, իսկ լուսամուտի շրջակալի վրա՝ Ադամի և Եվայի պատկերաքանդակները՝ համապատասխան գրություններով: Հարավային երեք նիստերի որմնախորշերում քանդակված են հանդիպակաց ծնկաչոք պատկերներ՝ գլխներին լուսապսակներ: Մի այլ տեղ ցլի գլուխ է, երրորդում Աստվածամայրն է՝ Մանկան հետ, չորրորդում պատկերված է արծվի գլուխ և այլն: Այստեղ հանճարեղ ճարտարապետն աստղերից, ծաղիկներից և ժանեկազարդ շղթաներից հյուսել է նրբակերտ նախշեր:

Ուշագրավ հուշարձան է *գավիթը*, որն իր ճարտարապետական հորինվածքով ավելի է ամբողջացնում վանքի կոթողայնությունը: Այն ներքուստ դահլիճ է (չափերը՝ 11,6 × 11,8)՝ ծածկված երկու զույգ հատվող կամարով և շթաքարային երդիկով: Գավթի արևմտյան պատից քիչ հեռու՝ երկու անկյուններում, պատին կից կանգնած է բազմանիստ երկու որմնասյուն, որոնց վրա հենվում են բարձրաթռիչք կամարները: Գավթից եկեղեցի տանող մուտքը երիզված է կիսակլոր կամար ունեցող ճակատամուտքով, որի երեսկալը մշակված է մանր հյուսվածքով, իսկ քանդակազարդ կամարը՝ աստղերով և շեղանկյուններով: Արևմտյան կամարների ծայրերի միջև տեղադրված է լայն, քանդակազարդ խաչը:

➥ էջ 8

Գանձասար՝ կորսվող դրախտավայր

Մի դրվագ Արցախ տանող ճանապարհներից

1988 թվականի գարնան առաջին օրերն էին: Ձմեռն արդեն հետ էր տարել իր ճերմակ փեշերը, ու գարունը ամոթխած աղջկա պես տեղ-տեղ մնացած մի քանի ափ ճերմակով անուշ մերկությունն էր փորձում թաքցնել: Արցախում ենք: Վազգեն Սարգսյանի հետ տեղացիներից մեկի կարմիր «Զապարոժեցով» գնում ենք Գանձասար: Ճանապարհին ձմռան նիրհից արթնացած բնության տեսարանները չեն վրիպում Վազգենի աչքից: Առաջին անգամ է Արցախում: Հասանք Վանք գյուղի սահմանին: Վազգենը հանկարծ ոչ այն է խնդրեց, ոչ այն է հրամայեց վարորդին կանգնել ցուցանակի մոտ: Կանգնեցինք: Ցուցանակին մեծ-մեծ տառերով հայերեն ու ռուսերեն գրված էր՝ «ՎԱՆՔԼՈՒ»: Վազգենը վարորդից սուր, քերող մի գործիք վերցրեց ու քերեց, մաքրեց, ջնջեց Վանքին սոսնձված «լու»-երը, հետո գոհ, իրեն հատուկ հոմերական ծիծաղով ասաց. «Դե՛հ, գնացինք»:

Հասանք Գանձասար: Եկեղեցին ու տարածքը գիշեր-ցերեկ հսկող ջահելները, տեսնելով կարմիր «Զապարոժեցը», իսկույն շրջապատեցին այն: Այդ օրերին Հայաստանից Արցախ գնացած ամեն մարդ հույս ու հավատ էր ամրացնում: Մինչև հիմա էլ հիշում եմ Գանձասարի երդվյալ պահապանների առնական դեմքերը, վառվռուն աչքերի փայլը: Այդ օրը Վազգենը նրանց համար «Գարուն» ամսագրի աշխատակից էր լոկ, որ գործուղմամբ Արցախ էր հասել...

Օրն արդեն իրիկնանում էր: Գիշերը Շահմասուր գյուղում մնացինք: Հյուրասիրության ջերմ գիշեր էր.... Առավոտյան կարմիր «Զապարոժեցով» վերադառնում էինք Ստեփանակերտ: Վազգենը խնդրեց Վանք գյուղի ցուցանակի մոտով անցնել: Արցախում գարունը հայերեն էր գալիս... Երա՞զ էր...

Չգիտեմ...

Սպարտակ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
գրող, հրապարակախոս

Խրիմյան Հայրիկի մշտնջենականությունը

➥ էջ 3

«Զարթի՛ր, որդեակ, զարթի՛ր հայ գեղջուկ, զարթի՛ր հայ երիտասարդ... Բաւ է քնացանք: Արթնալու ժամը հասաւ: Մենք ուշ ենք արդէն: Սերպը, յոյնը, պուլկարը, մակեդոնացին եւ մնացեալ ճնշուած ազգերը իրենց երկաթէ զէնքով առին իրենց բաժինը: Մենք անզէն, միայն թուղթով գացինք: Մեզի բաժին ալ թուղթի կտոր մը տուին ստախօս եւրոպացի դիւանագէտները: Զէնքի դիմելու ժամը հասած է....»:

Լինելով խորագետ ու վեհանձն՝ Վեհափառը հորդորում էր ժողովրդին միաբանվել՝ ընդդեմ կործանարար թշնամյաց, որովհետև անմիաբանությունը չարիք ու դժբախտություն է բերում իր պաշտելի երկրին, և միասնությունն է, որ կարող է դառնալ փրկության վերջին դուռ. *«Ներքին անհամերաշխությունը ավելի շատ է հայրենիքը կորստյան մատնում, քան եկած թշնամին»*,— ասում է Հայրիկը և հայերին կոչ անում, որ *«իսպառ թօթափեն սրտերից ատելութիւնը, մեծամտութիւնը եւ լինեն ընդմիշտ մի սիրտ եւ մի հոգի»:*

Հայրիկը նաև ընկերային արդարության ջատագովն էր, նրա սիրտը ցավում էր թշվառության մեջ խարխափող ժողովրդի համար, ընդվզում էր ազգային վշտերին անկարեկից, անտարբեր իշխանավորների ու մեծահարուստների դեմ՝ խորհելով. *«Մի՞թե կարելի է մերձավորից խլած հացով կշտանալ: Ոչ, գողացված և ուժի զորությամբ ձեռք բերած հացը շուտ է վերջանում: Անհատնելի և արդար է այն հացը, որ ձեռք է բերվում ճակատի քրտինքով: Ով այս սկզբունքը ոտնատակ տալով է հաց ուտում, նա քանդում է Աստծու պատվիրանը»:* Հայրիկը գտնում էր, որ *«Նա է իսկական ազնիվ անձ, որ դեպի ժողովուրդը ունեցած սիրո մեջ է փնտրում յուր փառքը»:*

Հայ ազգային պատմության մեջ Մկրտիչ Խրիմյանը հայտնի է նաև Տարոնի առաջնորդը, արծիվ Վասպուրականի պատվանուններով:

1855 թ. Խրիմյանը Վանում ձեռնարկեց «Արծուի Վասպուրականի» (հետագայում՝ «Արծուիկ Տարօնոյ») ամսաթերթը, որը հայության համար նորույթ էր թե իր բովանդակությամբ, թե հայ ազգային ոգու արտահայտությամբ: Թե Վարագա և թե Ս. Կարապետ վանքերի վանահայրության ժամանակաշրջանում Խրիմյանը բազմաթիվ դպրոցներ բացեց, եկեղեցիներ կառուցեց և գրքեր հրատարակեց. «Լոյս, գիտութիւն տարածելը հայկական խաւարի մէջ,— հիշում է Սիմոն Զավարյանը,— դպրոց բանալը, մամուլ, գրականութիւն ստեղծելը եղել է նրա ամենասիրած եւ ամենաառաջին գործը»:

Ազգանվեր գործունեության համար թուրքական կառավարությունը Խրիմյանին հայտարարեց անբարեհույս հոգևորական՝ փակելով հայկական դպրոց ու տպարան: 1869 թ. ընտրվելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք՝ Խրիմյանը նախաձեռնեց գավառահայության հարստահարությունը քննող հանձնաժողով, որի կազմած տեղեկագիրը Պոլսի ազգային ժողովը 1872 թ. ներկայացրեց Բարձր դռանը: Այդ գործունեությունը, սակայն, հարուցեց թուրքական կառավարության և Կոստանդնուպոլսի հայ մեծահարուստների դժգոհությունը, որի պատճառով 1873 թ. օգոստոսին Խրիմյանը հրաժարվեց պատրիարքությունից:

Խրիմյան Հայրիկի անցած ուղու մեջ կարևոր դրվագ է Բեռլինի վեհաժողովը, որի շրջանակում Արևմտյան Հայաստանի հարցը միջազգային դիվանագիտության մեջ մտավ որպես Հայկական հարց:

Բեռլինի դաշնագրությունում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-րդ հոդվածով, որտեղ ասված էր հետևյալը. «Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությունը»: Հոդվածի իրագործման վերահսկողությունը դրվում էր վեհաժողովի մասնակից բոլոր պետությունների վրա, ինչը վերջիններիս հնարավորություն էր ընձեռում միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Վեհաժողովը միաժամանակ պարտավորեցնում էր Ռուսաստանին իր զորքերն անհապաղ դուրս բերել գրավված տարածքներից, սակայն ոչ մի երաշխիք չէր տալիս 61-րդ հոդվածի կենսագործման համար: Բացի այդ՝ «Հայաստան» բառը փոխարինվում էր «Հայկական մարզեր» և «Հայաբնակ վայրեր» բառակապակցություններով: Այսինքն՝ Թուրքիան ազատվում էր Հայաստանը հայերի հայրենիք ընդունելու Սան-Ստեֆանոյի դաշնագրի ձևակերպումից:

Որպես Բեռլինի վեհաժողովի հայկական պատվիրակության առաջնորդ՝ Խրիմյան Հայրիկը նախապես մեկնել էր եվրոպական մեծ տերություններ՝ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, պետական պաշտոնյաների հետ հանդիպելով՝ փորձել ձեռք բերել նրանց բարյացակամությունը Հայկական հարցի լուծման համար: Սակայն Բեռլինում Խրիմյան Հայրիկին ու նրա հետ մեկնած հայ պատգամավորներին նույնիսկ չթույլատրեցին ժողովասրահից ներս մտնել, և նրանք հնարավորություն չունեցան օսմանյան լծի տակ տառապող հայության արդար պահանջները ներկայացնելու, մինչդեռ սերբերն ու բուլղարները փառահեղ ելույթ ունեցան և ընդունելություն վայելեցին, որովհետև նրանք քաջաբար պայքարել ու դիմադրել էին թուրքական բռնաճնշումների դեմ: Մերժված ու արհամարհված, հուսահատ ու տխուր՝ Հայրիկը վերադարձավ հայրենիք, Կոստանդնուպոլսի Գում Գափուի հայկական թաղի տաճարում կարդաց իր շատ հայտնի ԵՐԿԱԹԵ ՇԵՐԵՓԻ զեկույցը և ժողովորդին կոչ արեց պատրաստվել ազատագրական պայքարի:

1879-ին Վասպուրականի հոգևոր առաջնորդ ընտրվելը մեծ հնարավորություն էր Խրիմյանի համար՝ ազգային-ազատագրական պայքարի առաջին հունդերը հերկելու: Նա օժանդակեց, որ ստեղծվեն Վանի «Սև Խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունները, խրախուսեց նրանց գործունեությունը: Նրա ճիգերով 1885 թ. մայիսին Վանում հիմնադրվեց առաջին հայ քաղաքական՝ Արմենական կուսակցությունը: Արմենականները ազգային գաղափարաբանությամբ զինեցին Վասպուրականի և Պարսկահայքի հարյուրավոր հայ երիտասարդների՝ պատրաստելով նրանց հարմար պահի ինքնապաշտպանության դիմելու:

Օսմանյան բռնապետության կողմից աննկատ չմնացին Խրիմյանի համաժողովրդական համբավն ու ազգային հանդուգն ու կորովի գործունեությունը, և 1885 թ. նրան հրավիրեցին Կոստանդնուպոլիս, իսկ 1890-ին՝ Գում Գափուի ցույցից հետո, աքսորեցին Երուսաղեմ: 1892 թվականին, երբ Մկրտիչ Խրիմյանն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, Օսմանյան կառավարությունը տասներեք ամիս տևած բանակցություններից հետո միայն Ռուսաստանի ցարի միջնորդությամբ նրան թույլատրեց գալ Սուրբ Էջմիածին:

Օծվելով Հայոց 125-րդ Կաթողիկոս՝ Մկրտիչ Խրիմյանը մեծ ճիգեր գործադրեց ռուսական արքունիքի մեջ՝ Հայկական հարցը միշտ օրակարգում դնելու համար: 1895 թ. մեկնեց Սանկտ Պետերբուրգ, ներկայացավ Նիկոլայ II ցարին՝ Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման խնդրագրով: 1894—1896 թթ. արևմտահայության ջարդերի ժամանակ արեց առավելագույնը՝ նյութապես օգնելու գաղթականությանը և պայմաններ ստեղծելու երկիր վերադարձի համար:

Խրիմյան Կաթողիկոսի օրոք էր, որ Ռուսաստանի ցարը երկրի մեջ սկսված հեղափոխական շարժումները խեղդելու համար հրապարակեց օրենք, որով կրթությունը պիտի կենտրոնացվեր ռուսական վարժարանների մեջ, հայկական վարժարանները պետք է փակվեին, հայ եկեղեցապատկան կալվածքները՝ բռնագրավվեին: Խրիմյանը բողոքեց և եռանդուն պայքար մղեց այդ որոշման դեմ՝ հոգևոր թեմակալ առաջնորդներին կարգադրելով չենթարկվել դրան: ➥ էջ 8

ԱՆՑԵԱԼԷՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Այդպէս՝ ապագայում, յուսամ արդէն անկախ պետութիւն ունէք եւ իրագործել էք մեր դարաւոր երազանքը: Եթէ այո՛, ապա դուք հիմա ապրում էք ինչ-որ մեկի իրագործուած երազանքի մէջ: Միլիոնների երազանքի մէջ: Յուսամ գիտակցում էք ձեզ բաժին հասած բախտի կօրութիւնը: Կ'ուզենայի հմանալ՝ ինչպիսին է այդ երազանքն իրականում, բայց քանի որ չեմ կարող աչքովս տեսնել, թոյլ տուէք խօսքս յղել այս նամակով, եւ եթէ կարդաք այս տողերը, ես կը դառնամ ձեր ներկայի եւ իմ ապագայի մի մասնիկը:

Երբ գնայի Պերլինի քոնկրէս՝ մեր ժողովրդի իրաւունքները բարձրաձայնելու համայն աշխարհով, միայն այդժամ հասկացայ, որ նախ եւ առաջ պէտք է ունենալ իրաւունք ունենալու իրաւունք: Այդ իրաւունքը նուաճում են կենքով:

Երեւի լսել էք երկաթէ շերեփի մասին: Եւրոպական քաղաքակիրթ ազգերը, որոնք մեզ թւում էին օրինապաշտ եւ արդար, խղճահարութիւնից բացի ոչինչ մեզ չտուեցին:

Ռուսապուանը, որ թւում էր՝ մեր ժողովրդի մեծ բարեկամն է, իր շահերից բացի ոչինչ չէր տեսնում եւ չէր լսում:

Հայ ժողովուրդը կարծես ձմռան սառնամանիքին դրսում յայտնուած անօթի երեխայ լինէր, որի առջեւ բոլորը փակեցին իրենց դռան դռները: Հայ ժողովուրդը անտէր էր, բայց ամենից կարեւորը, որ ես հասկացայ՝ այն էր, որ մենք տէրեր չպէտք է փնտռենք դրսում:

Այդպէս՝ ապագայում, վստահ եմ՝ դուք չէք փնտռում օտար տէրերի եւ ձեր յոյսը չէք կապում ոչ եւրոպացիների, ոչ ռուսների եւ ոչ էլ մեկ այլ պետութեան հետ:

Եթէ ունէք անկախ պետութիւն, ապա ձեր միակ տէրը պէտք է լինի ձեր իսկ կառավարութիւնը: Յուսամ որ կառավարութիւնը ձեզ անտէր չի թողնում, իսկ եթէ անտէր է թողնում՝ ինչ իմաստ ունի ձեր անկախութիւնը:

Ժողովրդի ամենամեծ դժբախտութիւնն այն է, որ իր միգից դուրս եկած ղեկավարներն իր հետ վարուում են նոյնկերպ, ինչպէս օտարները: Մենք դարեր շարունակ ապրեցինք օտարի լծի տակ. մեզ հետ վարուեցին դաժանօրէն եւ անարդար: Մենք փնտռեցինք արդարութիւն եւ չգտանք:

Եթէ ունէք անկախ պետութիւն, յուսով եմ՝ այդտեղ արդարութիւն կայ:

Թուրքը հայի հետ շատ անարդար վարուեց: Հայը հայի հետ մի՞թէ կարող է նոյնկերպ վարուել:

Այստեղ՝ անցեալում, մեր ժողովրդի ամենամեծ ողբերգութիւններից մեկն իր գգիպութիւնն է: Անկիրթ ժողովուրդն ինչպէ՞ս կարող է իր տեղը գտնել այս խորամանկ աշխարհում: Թուրքիոյ իշխանութիւնները դա թոյլ չեն տալիս, քանզի մեր ժողովրդի կրթութեան մեզ իրենց կտանձն են տեսնում.

Որքան մեծ է ժողովրդի կրթութիւնը, այնքան կուսպ կը լինի իշխանութիւնը.

Ես իմ ողջ կեանքը նուիրեցի հայկական գաւառներում լուսաւորութիւն տարածելուն, բայց միայնակ՝ շատ բան չկարողացայ անել: Եթէ դուք պետութիւն ունէք, կրթէ՛ք մեր ժողովրդին, լուսաւորութիւն տարածէ՛ք գաւառներում: Անկիրթ ժողովուրդն անկիրթ տէրերի կ'ընկրի, որոնք կը հարստահարեն իրեն եւ մի օր ստիպուած՝ անկիրթ ժողովուրդն օտար տէրերի կ'ընկրի:

Այնժամ, երբ հասարակ ժողովուրդը գաւառներում կը դքնի կայսրեան ծանր բեռի տակ, մեծահարուստ հայերը Պոլսոյ կ'ապրեն ցոփ խրախճանքի մէջ: Նրանք անկարեր են ժողովրդի դրութեան՝ կարծես օտար լինեն: Թուրքիոյ իշխանութիւնները նրանց հետ նոյնիսկ կը դաշնակցեն, որ ժողովրդին հնազանդ պահեն: Յուսամ՝ ձեր պետութեան մեզ մեծահարուստներն այդպէս ամբարտաւան չեն եւ չեն դաշնակցի վատ իշխանութեան հետ՝ ընդդէմ ժողովրդի:

1876-ին, երբ օսմանեան ահմանադրութիւնն ընդունուեց, մեկանում փրկութեան յոյս արթնացաւ: Կարծեցինք, որ հինգ հարիւր տարեկան Թուրքիոյ պառաւած եւ ամուլ մայրը երկնելով, հին աշխարհի համար նոր՝ մանուկ ահմանադրութիւն կը ծնէր, բայց մեր յոյսերը ջարդարացան, եւ ժամանակը ցոյց տուեց, որ դրանք թղթին գրուած գեղեցիկ տառեր էին, իսկ ժողովուրդը շարունակեց տառապել:

Այդտեղ՝ ապագայում, գուցէ դուք էլ գեղեցիկ ահմանադրութիւն եւ օրէնքներ ունէք: Ես կը փափաքիմ, որ ձեր օրէնքները թղթի վրայ չեն մնում, ինչպէս օսմանեան ահմանադրութիւնը:

Եւ վերջում կ'ուզենամ պարզամել. ունեցէ՛ք այնպիսի դեսպաններ, որոնք պարշաճօրէն կը բարձրաձայնեն ժողովրդի պահանջները համայն աշխարհին, եւ հոգևորականն իր հօրը թողած չի կքաղուի դիւանագիտութեամբ:

Ունեցէ՛ք ղեկավարներ, որոնք կը սիրեն ժողովրդին, չի հայ ժողովուրդը շատ է տառապել օտար ղեկավարների ապերութիւնից: Եւ երբեք մի՛ փնտռէք օտար տէրերի:

Եւ եթէ այդպէս՝ ապագայում, անկախ պետութիւն ունէք, ամէն բան արէ՛ք, որ այլեւս երբեք, երբեք չկորցնէք ձեր անկախութիւնը:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Գանձասարի վանքը

➥ էջ 6

Մուտքի վերնամասով ձգվող կամարի տակ գտնվող հարթությունը զարդարված է շախմատաձև վարդյակներով և շղթայանման հյուսվածքով: Ա. Յակոբսոնի կարծիքով՝ «հորինվածքով խիզախ, կառուցվածքով իմաստուն» գավիթը «Հայաստանից դուրս ոչ մի տեղ չի կիրառված»: Այն եղել է Հասան-Ջալալյան տոհմի տապանատունը:

Այդ պատճառով էլ սյուները պատերի տակ մղելը եղել է կենսական պահանջ, որին համապատասխանել է ճարտարապետական նոր լուծումը: Գավթի մեջ՝ արևելյան կողմում, հանգչում են Հասան-Ջալալյան տոհմի նշանավոր մեծերը՝ Հասան-Ջալալ Բարեպաշտից ու հոգևոր հայրապետներից մինչև Բաղդասար մետրոպոլիտը: Նրանց միակտոր ու հարթ շիրմաքարերը ևս արցախյան աշխարհի քարգործ վարպետների արարիչ ձեռքով դարձել են արվեստի հոյակապ նմուշներ:

Գավիթն արտաքուստ պարզ է, այն ավարտվում է բարձր երդիկով, որը կենտրոնում պսակված է ութանիստ ռոտոնդայով: Հյուսիսային կողմի մուտքի վերին անկյուններում հովազի երկու բարձրաքանդակ կա: Հարավային ճակատի հարավարևմտյան կողմումի կլոր լուսամուտը շրջանակված է քառաթև զարդաքանդակով:

Գավթի հարդարանքի ամենակարևոր տարրն արևմտյան շքամուտքի երեսակալն է: Այն որոշ չափով դուրս է պատի հարթությունից և անմիջապես աչքի է զարնվում: Պատի եռաստիճան պատվանդանից բարձրացող զանգվածային կիսագլանը շրջանցում է դուռը՝ կազմելով նրա բարձրաքանդակ երեսակալը: Վերջինիս կենտրոնական մակերեսն ընդհատվում է կլոր ու իրար հաջորդող քառանկյունի նիստով՝ հարդարված հյուսածո զարդաքանդակով: Վերին աստիճանի նուրբ, բայց երբեք չկրկնվող այս՝ համարյա ոսկերչական աշխատանքն ավելի կատարյալ են դարձնում դռան մյուս երեսակալի փորագրությունները:

Գանձասարի քարաշեն պարիսպներից ներս՝ եկեղեցու հյուսիսային թևում է գտնվում միաբանության շենքը՝ ութ փոքր և երկու մեծ սենյակներով: Մեկ ուրիշ՝ ավելի մեծ երկհարկանի շենք էլ տեղակայված է արևելյան կողմում: Անցյալում այն ծառայել է որպես դպրոց, ապա՝ վանատուն: Վանքի պարիսպների համակարգում հետաքրքիր հուշարձան է գլխավոր մուտքը՝ հարավային դարպասը, որը կերտված է սրբատաշ քարով, ճարտարապետական ինքնատիպ լուծումներով: Հարկ է նշել նաև, որ 2006 թ. պարիսպներից դուրս՝ հյուսիսային կողմում, կառուցվել է հոգևոր ճեմարանի շենքը:

Վանքի պատերին առկա են բազմաթիվ արձանագրություններ, որոնց գերակշիռ մասը գրված է վարպետ գրիչների ձեռքով, իսկ վերջերս վանքի շրջապարսպից դուրս՝ հարավային կողմում, մեր կողմից հողածածկույթից պատահականորեն ի հայտ է բերվել Հովասափ միակյացի՝ խորհրդային ժամանակներում բարբարոսաբար ջարդված խաչքարի ներքնամասը, անձ, որը 1240 թ. վանքում հեղինակել և փորագրել է Հասան-Ջալալ Դոլայի մեծ արձանագրությունը: Նկատելի հատվածում կարդում ենք. «....եւ յառաջնորդու[թեան] Տր Վարդանա ես Յովասափ միակեաց կանգնեցի զխաչս ի փրկութի հոգո իմո որք երկրպագ յաղ[աւթս] հի[շեցեք]»:

Նշենք նաև, որ Գանձասարի վանքի շրջակայքում կան մի շարք ուշագրավ հուշարձաններ՝ եկեղեցիներ, մատուռներ, բնակատեղիներ, խաչքարեր, որոնց մի զգալի մասն արձանագիր է և կարևոր տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանի պատմական անցուդարձերի մասին: Այստեղ են գտնվում նաև նշանավոր Խոխանաբերդ ամրոցը, Հասան-Ջալալ իշխանի աթոռանիստ պալատը, որ կրում է «Դարպասներ» անունը, Սբ. Ստեփանոս և Հավապտուկ վանքերը և այլն:

Գանձասարի վանքը եղել է նաև Արցախ երկրամասի գրչության արվեստի նշանավոր ու խոշոր կենտրոններից մեկը: Վանքը նախկինում ուներ իր մատենադարանն ու ձեռագրերի հարուստ հավաքածուն, որտեղ գրվել, ծաղկազարդվել, պահպանվել են արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր: Վանքից ներկայումս հայտնի են տասներեք ձեռագիր մատյաններ, որոնք XIII–XVIII դդ. ընդօրինակություններ են: Գրչագրերից մեկը ներկայումս պահպանվում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի գրատանը, իսկ տասներկուսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում: Վաղեմությամբ ամենահին մատյանը Թորոս գրչի ընդօրինակած Ավետարանն է (ՄՄ, ձեռ. թիվ 378): Մատյանը մագաղաթյա է՝ գրված բոլորագիծ երկաթագրով, գրությունը՝ երկսյուն, ունի 311 թերթ, տողերի քանակը՝ 17, դրոշմազարդ շագանակագույն կաշվե կազմով: Այն իշխանական պատվեր է, գրվել է Խոխանաբերդի իշխան Վախթանգ Տանգիկի և նրա կնոջ՝ Խորիշահի պատվերով 1212–1214 թթ. ընթացքում, որոնք այդ մասին թողել են հիշատակարան: Ի պատիվ պատվիրատուի՝ մատյանը հայտնի է նաև Վախթանգ-Տանգիկի Ավետարան անունով:

Գանձասարի վանքից հայտնի երկրորդ գրիչը վանքի առաջնորդ Մատթեոս Մոնոզոնն է, որը 1417 թ. Մանուել քահանայի համար տաղերի և ներբողների մի ժողովածու է օրինակել. «....գծագրութեան սորա եղեւ ի սուրբ ուխտս Գանձասարայ՝ յերկիրս Արցախական, որ այժմ կոչի Խաչէն՝ ընդ հովանեաւ սուրբ նշխարացս Յովհաննու Կարապետին» (ՄՄ, ձեռ. 8689, թերթ 89 աբ): 1420 թ. տեր Սարգիսը Գանձասարի վանքում «ի հալալ արդեանց» խնդրել ու ստացել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», «զի սմա կան պատասխանիք ընդդէմ հերձուածողաց ու հեթանոսաց եւ կակնումն ուղղափառաց եւ առաջնորդ ճշմարտութեան» (ձեռ. 4004, թերթ 452 բ): Այստեղ 1551 թ. Հայրապետ աբեղան «դառն եւ ի նեղ ժամանակիս» Ղազար քահանայի պատվերով արտագրել է մի Ավետարան «ի յերկիրս յԱրցախ, որ է Խաչէն կոչի, ի տեղիս Մեծարանիս, որ է դուռն Գանձասարայ, որ գլուխն կա Սուրբ Յովհաննէս Մկրտչին» (ձեռ. 6513, թերթ 280 բ): Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի թիվ 2273 ձեռագիրը՝ գրված 1657 թ. Պետրոս կաթողիկոսի պատվերով, օրինակել է Գրիգոր երեցը. «Գրեցաւ եւ աւարտեցաւ ոսկիազարդ եւ ծաղկափթիթ Տետրս.... ի խնդրոյ երիցս երանելոյ եւ երջանիկ հայրապետի եւ սրբազան կաթողիկոսի Տեառն տէր Պետրոսի վերադիտողի Սրբոյ թոռն Գանձասարայ»: Գանձասարի վանքում է պահվել մագաղաթյա Կարմիր Ավետարանը, որն այժմ գտնվում է Չիկագոյի համալսարանի մատենադարանում:

Սլավա ՍԱՐԳՍՅԱՆ
հուշարձանագետ, Փաստավավերագրական միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր

Աստվածաշունչ՝ գիրք գրոց

ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի

Մինչև ե՞րբ, Տէ՛ր, պիպի մոռանաս ինձ իսպառ,
մինչև ե՞րբ պիպի շրջես երեսդ ինձնից:
Մինչև ե՞րբ խռովք ունենամ իմ հոգում
եւ ամենօրեայ ցաւ՝ իմ սրտում:
Մինչև ե՞րբ թշնամին պիպի բռնանայ ինձ վրայ:
Նայի՛ր եւ լսի՛ր ինձ, Տէ՛ր իմ Աստուած,
լո՛յս տուր, Տէ՛ր, իմ աչքերին,
որ երբեք մահուան քուն չմտնեմ:
Թշնամիս թող չասի, թէ՝ յաղթեցի նրան,
կամ հալածիչներս ցնծան, եթէ սասանուեմ:
Ես ոդորմութեանդ վրայ յոյս դրի, Տէ՛ր,
սիրտս հրճուեց քո փրկագործութեամբ.
կ՚օրհներգեմ քեզ, Տէ՛ր, բարերա՛րդ իմ:

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԱՐՏ

† Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն — մարտի 16

† ԾԱՂԿԱԶԱՐԴ — մարտի 24

† Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ԶԱՏԻԿ) — մարտի 31

Խրիմյան Հայրիկի մշտնջենականությունը

➥ էջ 3, 7

Անհավասար պայքարում կաթողիկոսը, հիրավի, հաղթեց, և 1905-ի օգոստոսի 1-ին հրապարակվեց ցարի հրամանագիրը՝ Հայ Եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերստին բացելու վերաբերյալ: Մկրտիչ Ա Վանեցին ձեռնամուխ եղավ նաև հայ հոգևորականության դաստիարակության խնդրին՝ վերապատրաստելով կրթված հոգևորականների մի նոր սերնդի: Նրա օրոք Էջմիածնում կառուցվեցին նոր հյուրանոց, Սինոդի նոր շենք, թանգարան և նոր մատենադարան, նորոգվեցին և հարդարվեցին Սուրբ Հռիփսիմե և Սուրբ Գայանե եկեղեցիները:

Խրիմյան Հայրիկն իր ազգանվեր գործունեության դժվարվերելք ճանապարհին առաջնորդվեց մի անվեհեր գաղափարով՝ ազատագրել Հայաստանը բռնատիրություններից, աշխարհասփյուռ հայությանը ժողովել հայրենիքում և հոգևոր-նյութական բոլոր ուժերը կենտրոնացնելով՝ հայոց երկիրն այնպիսին դարձնել, որ հայությունն այլևս հայրենի երկրից չհեռանա: Այս գաղափարի արդիականությունը պահպանվում է նաև այսօր, և Խրիմյան Հայրիկի վսեմափայլ ներկայության մշտնջենականությունը նաև իր իդեալների ու պատգամների կենսունակության մեջ է:

Թաթուլ ԱՎԱՆԵՍՅԱՆ
պատմաբան



Վարդգես Սուրենյանց. «Խրիմյան Հայրիկ»

Պատմական կտավում Վարդգես Սուրենյանցը Հայոց կաթողիկոսին պատկերել է բազմած վիճակում, այն պահին, երբ նա ստացել է ցարական Ռուսաստանի՝ 1903 թվականի հունիսի 12-ի օրենքը Հայ եկեղեցու գույքը բռնագրավելու մասին, ինչը նշանակում էր հայ թեմական դպրոցների փակում: Նամակը փակ ծրարում ընկած է Վեհափառի առջև՝ գորգածածկ հատակին, որի բովանդակությունն արդեն հայտնի էր նրան. այդ մասին հայտնել էր նամակաբերը՝ նույն այդ օրենքի նախաձեռնողներից մեկը՝ Երևանի նահանգապետ Նակաշիձեն: Դիպաշարային գեղապատկերում Կաթողիկոսի դեմքի անբավականությունը, բռունցք արած ձեռքերը, ինքնագոհ բազկաթոռին հենվելը ցույց են տալիս նրա արհամարհական վերաբերմունքը հրովարտակին: Սուրենյանցը կաթողիկոսին միայնակ է պատկերել սենյակում՝ առավել արտահայտիչ դարձնելով նրա կերպարը:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 28.02.2024 թ.
Տպաքանակը՝ 1265